

584

ԳՍՄԱԼԵԱՆՑ Ս.

# ՄՐՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ

Թարգմ. և փոխադրած

Ռուս. գերմ. ֆրանս.-ից



8

Բ-17

Թ Ի Յ Լ Ի Ս

և «ԻՊՕՌԱ», ԳԱՆՕՎՄԿԱՅԱ. № 3.

1911

19 MAY 2005  
2 NOV 2009

584

3  
P-17

Այ.

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

# ՄՐՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ

Մեր «Հեթիաքներ», «Չեն քագաւորի աղջիկ» և «Նրկոս աղբերացեղ» մանկական գրքերն արդէն սպառուած են. ամեն զիջողութիւն ընդունելու պատրաստ ենք, եթէ որ մանկական գրականութիւն խրախուսող անհատներ կամ հրատ. ընկերութիւններ հնար տան վայելուչ կերպով պատկերազարդել:



Հրատարակիչ ենք փնտրում նոյնպէս մեր այն պատմուածքների ու բանասիրական գրուածքների համար, որոնք տպուած կան «Արձագանք» լրագրի էջերում:

5654  
1901

Թարգմ. և փոխադրած

Ռուս. գերմ. ֆրանս.-ից



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ «ԷՊՕՌԱ», ԳԱՆՕՎՍԿԱՅԱ Ձ 3.  
1911

Շուշուաբերու կիւրակնօրեայ դպրոցի աշակերտներին.

1883 թուին, Արիստակէս սրբազանի առաջնորդութեան օրով էր, որ գլուխ բերի ձեր դպրոցը: Դուք՝ աանչպար, դուրգար, ներկարար, դարբին, դասաբ, նալբանդ, բաղմանչի, նախըջի, փափախչի, 30 հոգու չափ, որըդ ազափ, որըդ որդկերանց տէր, սիրով դըպրոց էիք գալիս գրել-կարդալ սովորելու: Գիւղում լուսանկարիչ չըկար, որ ձեզ խմբովին հանել տայի. ձեր լուսանկարը հոգուս մէջն է տպուած. քաղցրութեամբ յիշում եմ միատեղ պատարագին ներկայ լինելը, այնտեղից դասի գալը, յետոյ դպրոցըց դաշտ գնալը երգելու, գելդի ցաւերի մասին խօսելու: Միայն մահը կարող է մտքիցս հանել այն սրբազան վայրկեանները, երբ ամաչելուց քրտնքում էիք, անկարող լինելով շուտ ընտելացնել մաճի ու մանգաղի վրայ կոշտացած ձեր մատները մատիտ ու գրիչ բանացնելուն:

Այժմ թէև վաղուց հեռացած, բայց սրտիս վշտերից մէկն էլ այն է, թէ ինչո՞ւ կիւրակնօրեայ դպրոցը Շուշուէրում այլ ևս չի գործում. մի՞թէ տեղդ սրտացաւ ուսուցիչներ պակաս են, կամ գուցէ այժմեան անգրագէտ երիտասարդները աւելի լաւ են համարում պարապ ման գալով, թղթախաղութեամբ և այլ բանով ժամանակ սպանելը, քան թէ կիրակի օրը գրել-կարդալ սովորելը, ուսման մէջ առաջ գնալը:

Այն ժամանակ դուք էլ չէիք ուղում, ես ձեզ ուժով դպրոց քաշեցի և գրագէտ դարձրի. այժմ ձեր պարտքն է նախկին կիւրակնօրեայ դպրոցը վերաբանալ տալ, որ գիւղի երիտասարդները կիւրակի օրերը փոքոցում կուտելու, հայնոյնու փոխարէն դպրոց վազնն ձեզ պէս այբբէնի լոյսը ճաշակելու:

Լիայոյս լինելով, որ փափագս կը կատարէք, ձեզ եմ նուիրում սրտաշահ պատմութիւններով լիք այս գրքոյկը, անդրանիկ աշակերտներ:

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս.

1911 յուլիս  
Թիֆլիս

1. ՀՕՐ ՊԱՏԿԵՐԸ

Վաղ ժամանակ Պարսկաստանի մի քաղաքում մեռաւ մի վաճառական և թողեց մեծ կարողութիւն: Նա ունեցել էր մի որդի, որ փոքրուց հեռացել էր տնից, ոչ ոք նրան չէր ճանաչում:

Ժամանակ անցնելուց ետ այդ քաղաքում երեք երիտասարդ լոյս ընկան. նրանցից ամեն մինը հաւատացնում էր, որ ինքն է մեռած վաճառականի որդին: Դատաւորը խելօք էր, նրանց փորձելու համար բերել տուեց հանգուցեալի պատկերը և կրծքի վրայ նշան արեց, յետոյ աղեղ ու նետեր առաջարկելով երիտասարդներին ասեց. «ով որ ձեզանից կարենայ խփել իմ արած նշանին, նա կը ստանայ հանգուցեալի թողած բոլոր հարստութիւնը»: Մէկը վստահ առաջ կանգնեց, նետը սարեց աղեղի վրայ ու թոցրեց. նետը դիպաւ կրծքին, բայց նշանից հեռու: Երկրորդի նետն աւելի մօտեցաւ նշանին, բայց էլի մէջտեղը չէր: Հերթը երրորդ երիտասարդինն էր. սա վերցրեց աղեղը, նետը սարեց վրէն, լարը քաշելու միջոցին յանկարծ կուռը դողդողաց, գոյնը բոլորովին թռաւ, նետ ու աղեղը ձեռից վէր գըցելով լալագին գոչեց. «ոչ, դատաւոր, ես չեմ կարող լարը քաշել. ես աւելի լաւ կը հաշուեմ հօրս կարողութիւնից զրկուել, քան թէ քո պահանջը կատարել»: Դատաւորը մօտեցաւ, ձեռը լռանց և ասեց. «մի վրդովուիլ, հանգուցեալի

կարողութիւնը քոնն է, դու ես նրա իսկական որդին, որովհետև ոչ մի զաւակի ձեռ չի զօրիչ նետով ծակել իրա հօր կուրծքը, թէկուզ այդ լինի պատկերի վրայ»:

### 2. ՆՈՐ ՍՈՂՈՄՈՆ

Մի հարուստ ու ազահ մարդ կորցրել էր փողով լի քսակ: Նա ձայն տարածեց ողջ քաղաքում, թէ ով քսակը բերի, իրան տայ, հարիւր ռուբլի գտնելավարձ կը ստանայ: Մի ագնիւզիւզ գիւղացի եկաւ նրա մօտ քսակը ձեռին: Ազահը փողը համարեց ու ասեց. «այս քսակի մէջ հազար ռուբլի կար, այժմ մնացել է միայն իննը հարիւրը. տեսնում եմ, սիրելի, որ դու արդէն իմ խոստացած հարիւր ռուբլին վերցրել ես, ուրեմն մենք քուրթ ենք»: Գիւղացին շատ անգամ ասեց, որ ինքը քսակից ոչինչ չի վերցրել, ազահը չուզեց նրան հաւատալ: Այն ժամանակ գործն ընկաւ դատաւորին. սա լսեց երկուսին էլ և այսպիսի վճիռ արեց. «ձեզանից մէկը քրսակ է կորցրել հազար ռուբլի մէջը, միւսը մի քսակ է գտել ինն հարիւր ռուբլի մէջը, պարզ է, որ այս քսակը չի կարող պատկանել առաջնին. ես որոշում եմ, որ այս քսակն իրա մօտ պահի գտնողը, մինչև սրա կորցնող մարդը չայտնուի»:

### 3. ԱՌԱՆՑ ՔՐՏԸՆՔԻ ՓՈՂԸ ՀԱՄ ՉՈՒՆԻ

Աստուած ծերի կերպարանք առած Գաբրիէլ հրեշտակի հետ շրջում էր: Մի օր այնպէս

պատահեց, որ պիտի անցնէր պանդոկի դռնով: «Գաբրիէլ, ասեց Աստուած, արի ներս մտնենք, մի կտոր բան ուտենք»:— «Քո կամքն է, Տէր, պատասխանեց հրեշտակը:

Ներս մտան: Պանդոկ պահողներն էին մի մարդ ու կին:— «Ուտելու բան ունե՞ս, հարցրեց Տէրը:— «Աստծուն փառք, ինչո՞ւ չէ, համեցէք, ասեց պանդոկատէրը ու հիւրերի առաջ հանեց ունեցած լաւ կտորները: Նրանք մի մի պատառ վերցրին, մի մի բաժակ գինի խմելով ուժերը յետ բերին: Տէրը ծոցից հանեց ոսկով լի քսակը ու վճարեց ճաշի համար, ինչքան որ պանդոկատէրը պահանջում էր. դրանից ետ Գաբրիէլի հետ շարունակեց ճանապարհը: Պանդոկի տէրը փողատէրի մէկն էր. նրա աչքերը գնացին դեղին ոսկով լի քսակի ետնից, չը կարաց հանգիստ մնալ. ազահ սիրտն ասում էր, «ինչ ես պարապկանդնել, վազիր, ծերին սպանիր և քսակին տիրացիր»: Կնիկը շատ աշխատեց այդ մտքից ետ կացնել, չեղաւ. մարդը պանդոկը կնոջ յուսով թողեց ու ծռանց վազեց, որ գնացողները առաջը կտրի ու անմեղատուր անելով սպանի: Հէնց որ յանկարծ դուրս պրծաւ և ուզում էր մտադրութիւնը կատարել, մէկ էլ այն տեսաւ, որ իրա կերպարանքը Ֆոխուեց, դառաւ փալանք վրէն էշ: Տէրը բռնեց նրա մունգութից ու ետնից քաշելով ճանապարհը շարունակեց: Դիմացից գալիս էր մի գիւղացի, կանգնացրեց ու ասեց. «այ մարդ, բեզ շահաւէտ պայման եմ առաջարկում. այս գօրեղ էշը տեսնում ես, վերցրու տար, բա-

նացրու ամբողջ 12 տարի, օրական վարձը մի շալի: Այդքան ժամանակ բանացնելուց ետ էջք բեր այստեղ, իրա վարձագնի հետ ինձ յանձնիր»: Գիւղացին էջի վզին, ամբակներին նայելով ուրախութեամբ ընդունեց պայմանը, կապը քաշելով տարաւ տուն ու առանց մի ըրպէ դադար տալու սկսեց անտառից ճախ ու փայտ կրել, հանդից գաջ ու կիր բերել, արեն ու գլուխը ջարդելով բանագնել հաճախեց: Ժամանակը հէնց որ լրացաւ, գիւղացին էջն առաջն արած և վարձագինն էլ տոպրակով բերեց պատահած տեղը ու յանձնեց ծերին: Սա ծեծուած, ջարդուած էջի կապը քաշելով հասցրեց պանդոկի դուռը ու ձայն տուեց. «Ներան ո՞վ կայ, դուրս գայ»:—«Ես եմ, ի՞նչ էք հրամայում, պատասխանեց կինը: — Ի՞նչպէս, միթէ պանդոկը քո յուսով է մնացել»:—Ի՞նչ արած, սպի, մարդս այդպէս արեց, 12 տարի առաջ երկու հոգի եկան այստեղ, նստան, կերան, խմեցին, ծախսը վճարելով շարունակեցին իրանց ճամբէն: Ազահ մարդս նրանց ոսկիների փայլից յաղթուեց, գնաց, որ կողոպտի ու շուտ հարստանայ: Այն գնալն էր, ինչ գնաց»:—«Եթէ մարդը լոյս ընկնի, կարո՞ղ ես ճանաչել»: — Ի՞նչպէս չէ, ինչքան էլ պատկերով փոխուած լինի, իսկոյն կը ճանաչեմ»:—«Լաւ, ասեց Աստուած ու ձեռի գաւազանով մի անգամ զարկեց էջի փալանին: Էջը մի ակնթարթում փոխուեց, դառաւ աղամորդի, մէջք ու գլուխ արիւնոտուած, ոտները վիրաւոր, բըզկրտած, վրէն միս չը կար, չոր ոսկորներն էին

մնացել, այնպէս ուժասպառ, քթից բռնէին, հոգին կը տար: Խեղճ կինը զարհուրեց մարդուն այդ օրում տեսնելիս: Աստուած փողի տոպրակը կնկանը տալով ասեց. «հա այն գումարը, որ սա 12 տարուայ մէջ իբրև էջ վաստակել է: Այս թող խրատ լինի ու իմանայ, որ ով ուզում է փողի տէր դառնալ, պիտի աշխատի, ոտն ու ձեռը այսպէս արիւնշաղախ անի. առանց քրտընքի փողը համ չունի»:

#### 4. ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷՆ

Մի անգամ Եղիան այսպիսի խնդիրք արեց Աստծուն. «Ողորմած Տէր, սրի, մի ժամ ինձ իրաւունք տուր, ամեն բան տեսնեմ, ինչ որ դու ես տեսնում»: Աստուած ասեց. «Լաւ, յօժար եմ»: Հէնց այդ ըրպէն երկու մարդ ջաղացը աղուն էին տանում. մէկը սայլով էր, միւսը ոտով տոպրակն ուսին: Երբ նրանք գետի մօտ հասան, տոպրակաւորը խնդրեց սայլաւորին. «Թող տոպրակս քո սայլի վրայ դնեմ, ինքս ջրով անցկենամ»: Սայլաւորն ասեց. «չի կարելի, ձիուս բեռը շատ կը ծանրանայ, երբ ես էլ սայլի վրայ նստեմ»: Աղքատը տոպրակը թողեց այնտեղ գնաց վերև, որ տեսնի՝ արդեօք կամուրջ կայ: Հէնց որ նա թփերի ետև ծածկուեց, սայլաւորն իրա պարկը բաց արեց և սկսեց աղքատի տոպրակի ցորենը այնտեղ ածել: Եղիան այս անիրաւ բանը տեսնելով բարկացաւ ու որոտալով վերևից կայծակ ու շանթեր թափեց նրա գլխին: Աստուած շտապեց, Եղիային ձայն տուեց. «Երբիք

է, դադարեցրու: Օհ, եղիա, ինչեք կը բերէիր աշխարհի գլխին, եթէ մի ամբողջ օր իմ տեղը լինէիր և մարդկանց արարքները տեսնէիր»:

5. ԹԱԳԱՒՈՐԻ ԵՂՅԱՅՐՆԵՐԸ

Թագաւորն անց էր կենում փողոցով, մուրացկանը մօտեցաւ և ողորմութիւն խնդրեց: Թագաւորը տեսնելով, որ առողջ է, ոչինչ չը տուեց: Մուրացկանն ասեց. «Թագաւոր, երևում է, դու մոռացել ես, որ ամենա մի հօր որդի եմք, ես բռեղբայրն եմ, ինչո՞ւ բաժին չես տալիս»: Թագաւորը կանգ առաւ և ասեց. «Դու ճշմարիտ ես ասում, մենք ամենա եղբայրներ եմք, դու կարող ես բաժին ստանալ»: Այս ասելով մուրացկանին տուեց մի ոսկի: Մուրացկանը գոհ չը մնաց, ասեց. «Դու ինձ քիչ ես տալիս, մի՞թէ այդպէս բաժին կը տան եղբօրը. դու միլիօն ոսկի ունես, ինձ մի հատ ես տալիս»: Թագաւորն ասեց. «այդ էլ ճիշտ է, որ ես միլիօն ոսկի ունեմ, բայց մոռացել ես, որ միլիօնից աւելի քեզ պէս եղբայրներ ունեմ: Աւելի լաւ է, շուտով հեռանաս, թէ չէ որ նրանք գան, դրա կէսն էլ ձեռիցդ կը խլեն»:

6. ՄՐԱՄԻՏ ԳԻՒՂԱՑԻ

Աղբատ շինականը ցորեն չուներ, մտքումը դրեց, որ գնայ աղից ցորեն խնդրի. դատարկ ձեռով չը գնալու համար ունեցած մի հատ բաղը մօրթեց, տապակեց ու տարաւ: Աղէն բաղն ընդունեց և գիւղացուն ասեց. «Չնորհակալ եմ ընծայիդ համար, միայն չը գիտեմ, ո՞նց պիտի բա-

ժանենք քո բաղը: Ահա կինս, երկու տղէս և երկու աղջիկս, ինչպէս բաժանենք, որ ոչ որ չը նեղանայ»: Շինականն ասեց. «եթէ կուզէք, ես կը բաժանեմ»: Դանակը վերցրեց, կտրեց գլուխը և աղային մեկնելով ասեց. «դու ողջ տան գլխաւորն ես, գլուխը քեզ կը պատկանի»: Յետոյ կտրեց դնդուզը և տուեց աղջիկ-պարոնին. «քո բանն է տանը նստելը, ճաշին, զաւակներին մտիկ անելը, քեզ արժան է դնդուզը»: Յետոյ կտրեց ոտները և տուեց տղերանց. «ձեզ արժանի է ոտները, որ հօր ճամբով ման գաք»: Իսկ աղջկերանց երկու թևերը տալով ասեց. «Դուք շուտով տանից թռչելու էք, այս թևերը ձեզ պէտք կը գան: Ահա, անդա, ամենդ բաժին ստացաք, մնացածն էլ կը վերցնեմ ես»: Եւ ամբողջ բաղը պահեց իրան: Աղէն ուրախ ծիծաղեց, շինականին թէ ցորեն տուեց և թէ փող:

Շէնից մի ունևոր մարդ լսեց, որ աղէն մի բաղի համար թէ ցորեն է տուել և թէ փող. ինքը հինգ բաղ միանգամից տապակեց ու տարաւ ազի տուն: Աղէն ասեց. «Չնորհակալ եմ բաղերի համար, բայց տես, ես ունեմ կին, երկու տղայ և երկու աղջիկ, բոլորս վեց հոգի. ո՞նց հաւասար բաժանենք բաղերը մեր մէջ»: Ունևոր շինականը գլուխը քորելով շատ մտածեց ու հնար չը գտաւ: Աղէն կանչել տուեց աղբատ շինականին և առաջարկեց, որ բաղերը հաւասար բաժանի: Սրամիտ շինականը վերցրեց մի բաղ, տուեց աղին ու աղջիկ-պարոնին և ասեց. «Դուք երկու էք, բաղն էլ ձեզ հետ կը լինէք երեք»:

Մէկը տուեց տղերանց և ասեց. «դուք նրա հետ կը դառնաք երեք»: Մէկ բաղ տուեց աղջկերանց ու ասեց. «ահա դուք էլ երեք էք»: Երկու բաղն էլ վերցրեց իրան և ասեց. «ես էլ այս բաղերի հետ կը լինեմ երեք»: Տես, աղա, այստեղ բոլորս հաւասար դուրս եկանք: Աղէն ծիծաղեց և աղքատ շինականին էլի ցորեն ու փող բաշխեց, իսկ հաստագլուխ ունեւորին տանից անպատիւ դուրս արեց:

### 7. ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԻՐԱ ՀԱՐԵՒԱՆԸ

Գերմանիայի թագաւորն իրա մայրաքաղաքից եօթ ժամ հեռաւորութեան վրայ մի գեղեցիկ պալատ ունէր: Այդ պալատին մօտիկ գտնուում էր մի ջաղաց, որի չըխշակոցն ու դընդդընդոցը թագաւորին գիշեր ցերեկ հանգիստ չէին տալիս: Դրա համար մի օր ջաղացպանին կանչել տուեց պալատ և ասեց նրան. «սիրելի հարևան, դու պիտի իմանաս, որ մենք էլ իրար մօտ չենք կարող ապրել, մեզնից մէկն ու մէկը պիտի հեռանայ: Ի՞նչ ես տալիս իմ պալատին, որ ես հեռանամ»:— Ի՞նչքան էք պահանջում, ձերդ մեծութիւն, որ տամ, հարցրեց ջաղացպանը:— «Այ գարմանալի մարդ, հրտեղից ունես այնքան փող, որ իմ պալատն առնես»:— «Ողորմած տէր, այն ժամանակ դուք էլ այնքան փող չէք ունենալ, որ իմ ջաղացն առնէք, որովհետև նա ծախու չի»:— «Լսիր, ես քեզ նրա համար կը վրձարեմ հազար ուլբլի»:— «Միտք չունեմ ջաղացըս ծախելու. ես ծնուել եմ նրա մէջ, կամե՛

նում եմ նրա մէջ էլ մեռնել: Ինչպէս որ ջաղացը ստացել եմ իմ հօրից, այնպէս էլ ես պիտի որդուս ժառանգութիւն թողնեմ»:— «Է՛հ, ի՞նչ հարկ կայ քեզ հետ երկար խօսել կամ գլուխ ցաւացնել, խօսեց թագաւորը, կը հրամայեմ ջաղացդ զին կտրացնել և հարցը կարճ վերջացնել. կուզես նրա արժէքը վեր կալ, կուզես՝ չէ»:— «Հա՛, այդպէս ուժով կարող էիք վարուել, թագաւոր, խօսեց ջաղացպանը, եթէ ձեր մայրաքաղաքում ոչ դատարան լինէր և ոչ դատաստան»: Ջաղացպանի այս խօսքերի վրայ թագաւորը կոտորուեց ու ասեց. «դու իրաւացի խօսեցիր, սիրելի, արի դարձեալ շարունակենք ապրել իրար կողքի իբրև լաւ հարևաններ»:

Այդ ջաղացը այժմ էլ կայ և անցորդներին պատմում է Ֆրիդրիխ Մեծի արդարասիրութեան մասին:

### 8. ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԾԱՌԱՆ

Ֆրիդրիխ Մեծը շատ անգամ նստած աշխատում էր մինչև կէս գիշեր, բայց միւս առաւօտ զարթում էր ճիշտ 4 ժամին, ինչպէս իրասովորութիւնն էր: Քանի որ երիտասարդ էր, այդ բանը հեշտ էր կատարում, բայց երբ ծերացաւ, շատ անգամ դժուարանում էր կատարել: Մի անգամ նստած էր գրասեղանի մօտ և կէս գիշերը վաղուց անցել էր. այդ ժամանակ ծառան ներս մտաւ և յիշեցրեց թագաւորին, որ քնելու ժամանակ է: Թագաւորն ասեց. «ես շատ կարևոր գործ ունեմ, առաւօտը չորս ժամին դու՛

պիտի ինձ զարթեցնես: Ես քնհատ կը լինեմ, չեմ ուզիլ վեր կենալ, բայց քեզ հրամայում եմ, որ չը քաշուես ինձ զարթեցնել, լսում ես»:

Երբ առաւօտեան չորս ժամը խփեց, ներս մտաւ ծառան: Թագաւորը պինդ քնած էր, ուշկալ ծառան սկսեց բարձր ձայնով նրան զարթեցնել: Թագաւորն աչքերը բաց արեց ու ասեց. «Ես կամենում եմ մի կէս ժամ էլ քնել, թող տուր»: — «Բայց չէ որ Ձերդ մեծութիւնը հրամայել է, որ ճիշտ 4 ժամին անպատճառ զարթեցնեմ, ասեց ծառան: — «Այժմ էլ լսում ես, որ չեմ կամենում, գոչեց թագաւորը: — «Ձերդ մեծութիւն, դուք պիտի այս բոպէիս վերկենաք, պատասխանեց ծառան և ընդիմանալը բանի տեղ չը դնելով այնքան նեղեց, որ թագաւորը խիստ զայրանալով գոռաց. «Անուշակալ անպիտան, չե՞ս թողնիլ, որ քնեմ. քեզ ասում եմ, հեռացիր»: Ծառան երբ տեսաւ, որ ասելով, խնդրելով չի կարողանում թագաւորին տեղից վեր կացնել, դիմեց խելացի միջոցի. վերմակը վերցրեց վրայից և ներքև գցեց: Այս անգամ Փրիդրիխը պառկած տեղից վեր կացաւ և շորերը հագնելով ասեց. «Կեցցես, քաջ տղայ ես, միշտ էլ այսպէս վարուիր, երբ չուզենամ վեր կենալ»:

Այսպէս էլ միշտ անում էր ծառան. հէնց որ ձայն տուած միջոցին ծերունի թագաւորը չէր վեր կենում, ծառան վերմակը թռցնում էր նրա վրայից:

8. Ո՞ՒՄ ԿԱՐԳԱԴՐԱԾՆ Է ԱԻՆԼԻ ՃԻՇՏ

Մի մարդ ճղուպրի ծառի մօտ ձմերուկ էր ցանել: Ամառը շոք ժամին ծառի տակ պարկած հանգստանում էր: Նայեց խոշոր ձմերկին, յետոյ նայեց մանր ճղուպրին և գլուխն օրօրելով խօսեց. «Տէր Աստուած, դու աշխարհում ամեն բան իրա յարմար տեղն ես ստեղծել, բայց այս մէկում սխալուել ես, որ զօրեղ ծառին կերմակ պտուղ ես տուել, անզօր թուփին խոշոր ձմերուկ»:

Այս խօսելու միջոցին՝ քամուց էր, թէ ինչից, յանկարծ մի ճղուպուր ընկաւ ծառից և տրամբ դիպաւ այգետիրոջ ճակատի մէջտեղը: Գիպած տեղը ճղուպրի մեծութեամբ ուռաւ ու կսկրծաց: Մարդն սկսեց ճակատը եռանդով շփել ու աղաղակել. «մեղայ քեզ, Տէր Աստուած, ես շատ սխալ եմ, դու ամեն բան իմաստութիւնով, իրա յարմար տեղն ես ստեղծել: Ով չը հաւանի քո կարգադրածին, թող նրա ճակատն էլ իմի օրն ընկնի»:

Յետոյ ինքն իրան յանդիմանեց. «Ինչ յիմարն եմ, իմ խելքով ուզում էի բարձր ծառի վրայ ձմերուկներ բրցցրնել: Եթէ այն փոքր ճղուպրի տեղ ահագին ձմերուկն ընկած լինէր գլխիս, ի՞նչ կըլինէր իմ վիճակը, հօ շունչս փչած կը լինէի»:

9. ԽԵԼՕՔ ՀՈՎԻԻ

Մի շաղաքպան իրա շաղաքի դռան ճակատին մեծ տառերով գրել էր տուել. «ապրում եմ ու հոգս չունեմ»: Պատահեց, որ մի օր թագաւորը

ւորը ջաղացի առջևով անց կենալիս այդ գրածը կարդաց ու իսկոյն հրաման արեց, որ ջաղացպանին դուրս կանչեն. «Ի՞նչպէս համարձակուում ես պարծենալ աշխարհի առաջ, թէ առանց հոգսի ես ապրում: Ես թագաւոր տեղովս չեմ կարողանում այդ բանն ասել, դու ինչացո՞ւ ես»: Ջաղացպանը պատասխանեց. «Ի՞նչպէս թէ ինչացո՞ւ եմ. հարուստ մարդ եմ ու առանց հոգսի եմ ապրում»: — «Լա՛ւ, խօսեց թագաւորը, որովհետեւ դու առանց հոգսի ես ապրում, ես քեզ կը սովորցնեմ, թէ գլուխ տրաքացնելն ի՞նչ բան է. քեզ տալիս եմ այս երեք հարցը. 1, ի՞նչքան է հեռաւորութիւնը այստեղից մինչև երկինք. 2, ի՞նչքան ես գնահատում դու ինձ. 3, ի՞նչ եմ մտածում այս ըոպէիս: Այս հարցերը լուծելու և ինձ պատասխանելու համար քեզ մի տարի ժամանակ եմ տալիս. թէ չիմացար, գլուխդ պիտի կտրուի»: Թագաւորը գնաց ու ջաղացպանին թողեց արիւն ծովում. այն օրից գլուխը կախ արեց ու մնաց տխուր, ունքերը կիտած. ինչքան էլ տխրութեան պատճառը հարցնում էին, ձայն չէր հանում: Տարին վերջանում էր, պատասխաններ չէր գտել: Ջաղացպանը սրտնեղած պատմեց իրա վիշտը հովիւ եղբօրը, որին հայրական մասից զրկել հեռացրել էր: «Ի՞նչ կըտաս, որ քեզ ազատեմ թագաւորի պատժից, ասեց հովիւը: — «Ունեցածիս կէսը քեզ, ասեց ջաղացպանը, «Դէ հազուստդ տուր ինձ, իմը դու վերցրու», ասեց հովիւը ու ջաղացպանի պէս ալրաթաթախ գնաց ներկայացաւ թագաւորին: Թագաւորը հարցրեց.

«դէ, սոսա, ի՞նչքան է հեռաւորութիւնը այստեղից մինչև երկինք»: Հովիւն ասեց. «մի օրուայ ճանապարհ, որովհետեւ Յիսուս ասեց իրա աջ կողմ խաչուած աւազակին. «այսօր ինձ հետ կը լինես արքայութեան մէջ»: — «Այժմ ասա, ի՞նչ ես գնահատում դու ինձ»: — «Երկնաւոր թագաւոր Յիսուսին 30 արծաթ գին կտրեցին, դու նրանից պակաս ես, թէպէտ աշխարհի վրայ առաջինն ես, ուստի 29 արծաթից աւելի չարժես»: — «Խօսքդ տեղին է, դէ արի, վերջին հարցին էլ պատասխանիր. ի՞նչ եմ մտածում այս ըոպէին»: — «Տէր թագաւոր, դու այժմ մտածում ես թէ ես ջաղացպանն եմ, բայց սխալում ես, ես նրա եղբայրն եմ»: Թագաւորի քէֆն եկաւ մանաւանդ վերջին պատասխանի վրայ, առատ վարձատրեց ու արձակեց:

Ջաղացպանը եղբօրը տուեց իրա հարստութեան կէսը ու նրա հետ սիրով ապրեց մինչև կեանքի վերջը:

### 10. ԱՓՐԻԿԱՅԻ ԹԱԳԱԻՈՐԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Աղէքսանդր Մակեդոնացին անթիւ ժողովուրդներ նուաճելով մտաւ Ափրիկայի երկիրներից մինը, որ ոսկով շատ հարուստ էր: Բնակիչները դուրս եկան նրա հանդէպ և մատուցին պատկանելի ռոպէ պտուղներ: «Ձեր պտուղներն ինձ հարկաւոր չեն, ասեց Աղէքսանդրը, ես չեմ եկել ձեր գանձերով հիանամ, այլ ծանօթանամ ձեր վարք ու բարբին»: Այն ժամանակ բնակիչները Աղէքսանդրին առաջնորդեցին հրապարակը,

ուր նրանց թագաւորը դատաստան էր կարում: Այդ միջոցին թագաւորին մօտեցաւ քաղաքի բնակիչներէց մինը և ասեց. «Թագաւոր, ես այս մարդուց մի պարկ ալիւր առայ և մէջը գտայ անա այսքան ոսկին: Ալիւրն իմն է, բայց ոսկին՝ չէ: Այս մարդը չի ուզում ետ վերցնի. որոմած թագաւոր, վճռիր, որ ոսկին վերկալնի, որովհետև նրա սեպհականութիւնն է»: Միւսն ասեց. «դու վախենում ես քո մօտ պահել ուրիշի սեպհականութիւնը և ուզում ես, որ ես իւրացնեմ այն, ինչոր ինձ չի պատկանում: Ես քեզ վրայ ծախեցի պարկը իրա միջի եղածով: Թող քեզ կենայ քո սեպհականութիւնը: Որոմած թագաւոր, խնդրում եմ, վճռիր, որ այդ ոսկին նրանն է»: Թագաւորը հարցրեց առաջին գանգատաւորին. «տղայ ունե՞ս թէ չէ»:—«Ունեմ, ասեց գանգատաւորը: Յետոյ հարցրեց միւսին. «աղջիկ ունե՞ս թէ չէ»:—«Ունեմ, պատասխանեց նա:—«Շատ բարի, ասեց թագաւորը, դուք երկուսդ էլ ազնիւ մարդիկ էք, նշանեցէք ձեր գաւազներին իրար հետ և պարկի մէջ գտնուած ոսկին տուէք նրանց իբրև օժիտ»:

Այս վճիռը երբ լսեց Աղէքսանդրը, շատ զարմացաւ. «Ի՞նչի վրայ ես զարմանում, միթէ ես անարդար դատաստան արի, հարցրեց ամբողջ թագաւորը:—«Ոչ, քո դատաստանը արդար է, պատասխանեց Աղէքսանդրը, բայց իմ երկրում այդ գործն ուրիշ կերպ կը վճռէին»:—«Ի՞նչպէս, հարցրեց ամբողջ թագաւորը:—«Երկու գանգատաւորների գլուխները տեղն ու

1001  
5664

տեղը կը կտրէին»: Այդ խօսքերի վրայ թագաւորը ձեռները չխփացնելով գոչեց. «միթէ ձեր աշխարհում արև է ծագում կամ երկինքը միթէ ձեր երկրին ցող ու անձրև է տալիս»:—«Այո, ասեց Աղէքսանդրը:—«Եթէ ասածդ ուղիղ է, խօսեց թագաւորը, այդ անպատճառ ձեր աշխարհում ապրող անմեղ անասունների սիրու համար կը լինի, որովհետև ձեր նման մարդկանց վրայ ոչ արև պիտի ծագի և ոչ էրկինքը անձրև թափուի»:

12. ԱՐԱՅԻ ՉԻՆ

Նաբէք արաբը մի այնպիսի գործակալի գեղեցիկ ձի ունէր, որ ով տեսնում էր, արաբաշելով ասում էր՝ երանի իմը լինի: Մի ուրիշ արաբ, Թայիր անունով, մտքումը դրեց այդ ձին ձեռ գցել. Նաբէքին առաջարկեց բազմաթիւ ուղտեր և այլ հարստութիւններ, միայն թէ ձին տայ. Նաբէքը ոչ մի բանով չէր ուզում փոխել իրա սիրելի ձին: Այն ժամանակ Թայիրը վճռեց իրա նպատակին հասնել խորամանկութեամբ. նա երեսը բան քսելով այլակերպուեց, հագաւ քրքրուած շորեր, վիզն ու ստները փալասներով փաթաթեց իբրև եարոտ-փարոտ մուրացկան, այդ կերպարանքով գնաց կանգնեց այն ճամբի վրայ, որով պիտի Նաբէքը անցնէր: Երբ Նաբէքը մօտեցաւ, Թայիրը սուտ կերկերուն ձայնով աղերսեց. «խեղճ օտարական եմ, երեք օր է, չեմ կարողանում շարժուել, որ գնամ հաց մուրամ. մեռնում եմ, օգնիր ինձ, Աստուծո՛ւ ձեռը քեզ վար-



ձստրի»։ Նաբէքն ընդունեց նրան իսկական մու-  
րացկանի տեղ ու խղճալով ասեց. «նստիր գա-  
լաքիս, գնանք իմ տուն»։ Բայց խաբեբան պա-  
տասխանեց. «ամխ, չեմ կարող ինքս բարձրանալ,  
ուժ չունեմ»։ Փափկասիրտ Նաբէքը ձիուց իջաւ,  
Թայիրի մօտ քաշելով ու խըտտելով նրան նստաց-  
րեց ձիու վրայ։ Երբ մուրացկանը թամբի մէջ  
լաւ տեղաւորուեց, ասպանդակները սղմեց ձիու  
կողքերին ու սլանալով կանչեց. «իմացիր, ես Թա-  
յիրն եմ, ձիդ խլեցի ու տանում եմ իմ տուն»։  
Նաբէքը նրա ետնից աղաղակեց, «դէ սպասիր,  
մի խօսք ասեմ, յետոյ գնում ես, գնա»։ Թայիրը  
գիտէր, որ այդ հրեղէն ձիու ետնից հասնող չի  
լինիլ, այնքան հեռու կանգնեց, որ տէգը չը հաս-  
նի։ Նաբէքը ձայն տուեց. «դու տանում ես իմ  
ձին, էհ, վնաս չունի, Աստուած քեզ հետ։ Բայց  
քեզ մի բան եմ աղաչում, խոստացիր, որ ոչ ո-  
քի չասես թէ ինչ խորամանկ միջոցով իմ ձիուն  
տիրացար»։ — «Ինչո՞ւ համար չասեմ, հարցրեց Թա-  
յիրը։ — «Նրա համար, պատասխանեց Նաբէքը, որ  
մի ուրիշ մարդ նեղ ժամանակ օգնութիւն կը  
խնդրի, կը կարծեն թէ նա էլ միտք ունի խա-  
բելու։ Այն ժամանակ ես պատճառ կը դառնամ,  
որ մարդիկ այլ ևս իրար բարերարութիւն չեն  
անիլ, որովհետեւ ամենն էլ կը վախենան խաբուե-  
լուց, ինչպէս ես»։

Թայիրն այդ խօսքերը լսելով մնաց սառած,  
ինքն իրան մտածեց, յետոյ ձիուց վէր գալով ա-  
սեց. «ներիր սխալմունքս, Նաբէք, ես մոլորուած  
էի, նախանձը իմ աչքերը փակել էր, դու կորց-

րած ճանապարհս ցոյց տուիր»։ Այս ասելով  
գրկեց Նաբէքին և ձին վերադարձրեց։ Յետոյ  
գնաց նրա վրանը, երեք օր հիւր մնալով եղբայ-  
րական ուխտ կապեց։

### 13. ԱՆՁՆՈՒՆԻՐ ԱՂՂԻԿ

Ձինաստանում այսպիսի հին օրէնք կայ, ով  
խաբէութեան մէջ բռնուի, նրա ձեռները պիտի  
կտրել։ Մի մանդարին (բարձրաստիճան մարդ)  
բռնուեց այդ յանցանքի մէջ։ Բողոքիսանը (չի-  
նաց կայսրը) գայրացաւ նրա վրայ և հրամայեց  
ձեռները կտրել։ Ամեն ինչ պատրաստել էին  
պատիժը գործադրելու համար, երբ յանկարծ  
պալատի դուռն եկաւ դատապարտուած մանդա-  
րինի մատաղահաս աղջիկը և սկսեց աղերսել, որ  
թողնեն Բողոքիսանին ներկայանայ։ Թեթեւ բան  
չէր նրա խնդիրը, բայց նա այնպէս մորմորուում  
էր, որ պալատականները կակղեցին ու սղջկան  
ներս թողին։ Երբ տեսաւ ոսկու, աղամանդների  
մէջ փայլող Բողոքիսանին, ընկաւ ոտներն ու ա-  
սեց. «հօր թագաւոր, ասում են, իմ հայրը ար-  
ժանացել է պատժի և պիտի ձեռներից զրկուի»։  
Նա զէպի թագաւորը մեկնեց իրա փոքրիկ, ըն-  
քոյ ձեռները և խօսքը շարունակեց. «ահա, կրա-  
րել տուր իմ ձեռները, սրանք պատկանում են  
իմ քամբախտ հօրը, բայց չեն կարող կերակրել  
թուլացած մօրս, հիւանդ եղբօրս և փոքր քրոջս։  
Իմ ձեռներիս հետ վարուիր օրէնքի խստութեամբ,  
միայն անվնաս թող հօրս ձեռները, որ պահպա-  
նեն մեր ընտանիքը»։

Բողոքիխանի արիւնը սրտում սառաւ, երբ տեսաւ այսպիսի որդիական սէր, բայց ցանկանալով այն փորձել, ասեց իրա ոտներէ առաջ փռուած աղջկան. «վեր կաց, ըս ուզածը կը կատարուի, թո՛ղ քո անմեղ ձեռները կտրեն հօրդ մեղաւոր ձեռներէ փոխարէն»: Բողոքիխանի հրամանով աղջկան տարան պատժի հրապարակը, ուր միևնոյն ժամանակ պիտի բերէին և նրա բանտարկուած հօրը: Աղջկան մօտեցրին մի կոճղի, որ ծածկուած էր արիւնի բծերով, կոնները թոկով ամրացրին կոճղի վրայի երկաթէ օղերին, դահիճը սուրը հանած մօտեցաւ նրան: Աղջիկը գունաթափուեց, բայց բերանից աղերսի կտոր չը լսուեց: Հէնց այն է, սուրը պիտի իջնէր մանկական մերկ բազուկներէ վրայ, իսկոյն պալատականը վրայ թռաւ և դահճի թեր բռնեց: Այդ միջոցին հրապարակի դուռը չըբխակալէ բացուեց, աղջկայ հայրը շղթաներից ազատ կանգնեց նրա առաջ ու երախտագէտ սրտով կոնները մեկնեց անձնուէր աղջկանը գրկելու:

Բողոքիխանը ներեց մանդարինին և հրամանեց այլևս մարդ չը պատուհասել այն հրապարակում, ուր փորձի ենթարկուեց անձնուէր աղջիկը: Հրապարակի մէջ կանգնել տուեց մի քարէ սիւն, ճակատին մարմարէ տախտակ կպցրած և վրէն ոսկէ տառերով այս խօսքերը գրած. «Իխուճ մանդարինի Սիու Լիէն աղջիկը այստեղ գոհում էր իրա մատաղ կեանքը հօր կեանքը փրկելու համար: Երանի այն հայրերին, որոնք այսպիսի աղջիկներ ունեն. երանի այն աշխարհին, որի

վրայ բնում ու աճում է այսպիսի սէր»:

14. ԻՍԿԱԿԱՆ ԱՆԿԵԱԼՆԵՐ

Բաղդատի իշխանը շինել տուեց մի անկելանոց, ճակատին գրել տուեց ոսկէ տառերով երեք խօսք «Իսկական անկեալների համար»: Նրա միտքըն էր իմանալ, թէ քաղաքում քանի պարապ մարդիկ կան, որ ծուլութիւնն արհեստ շինած գործի չեն կենում: Երկու օրից ետ անկելանոցում ազատ տեղ չկար. ձրի հացի ու օթեանի լուրն առնելով շրջականերից էլ անթիւ ծոյեր վազել էին քաղաք ու խնդրելու փոխարէն պահանջում էին, որ անկելանոցում իրանց տեղ տան: Իշխանը սուտ անկեալներին ջոկելու համար այս հնարը մտածեց. հրամայեց կրակ տալ անկելանոցը, միայն այնպէս անել, որ մարդ չայրուի: Կէս գիշերին ամեն կողմից գոռացին «հրդեհ, հրդեհ, օգնութիւն հասէք»: Քաղաքը բարձրացած բոցերից լուսաւորուեց: Բնակիչները շփոթուած վազեցին ու տեսան ինչ — անկելանոցը բոցերի մէջ թաղուած: Ժողովուած բազմաթիւ անկեալները տեսնելով հրդեհի ծուխն ու մուխը, տեղներից վեր թռան, փախան. մի քանի ըսպէում ողջ բնակարանը թափուրացաւ: Դռներն ամենը կրճնկի վրայ բաց էին: Ներսը մնացին միայն երկու հոգի, անկողնի մէջ պարկած. այնքան ալարկոտ էին, որ իրանց գլուխն ազատել չէին ուզում. սպասում էին դրսի օգնութեան: Մէկը տեսաւ, որ ծուխն իրան խեղդում է, կրակն էլ մօտենում էր, ալարեց, որ ժաժ գայ, պառկած տե-

դից գոռաց. «օգնեցէք ի սէր Աստծու»: Ծառաները ծածուկ նրանց հետևում էին: Երկրորդ անկեալն աւելի վատթար էր, նա դարձաւ ընկերինասեց. «այլարս գալիս է բարձր ձայն հանեմ, իմ տեղ էլ գոռա, որ այրւում եմ»: Ծառաները մտան ու շալակած դուրս բերին: Իշխանը լսեց նրանց մասին և ծիծաղելով ասեց. «ստուգուեց, որ քաղաքում երկու իսկական անկեալ կայ. դրանց պահեցէք իբրև ողորմելի արարածների, իսկ միւսներին տարէք բանտ»:

15. ՀԱՉԱՐ ՈՍԿԻ

Հարուստի մէկը կամեցաւ հազար ոսկի բաժանել աղքատներին, բայց չէր իմանում ինչպիսի աղքատների տայ, որ վարձք լինի: Երեկոյեան քահանայի մօտ եկաւ և ասեց. «տէր հայր, կամենում եմ աղքատներին հազար ոսկի բաժանել, բայց չը գիտեմ՝ ո՞ւմ տամ: Խնդրում եմ վերցնէք փողը և բաժանէք ծխի աղքատներին»: Քահանան պատասխանեց. «գումարը խիստ մեծ է, ես նոյնպէս չը գիտեմ՝ ում բաժանեմ: Կարելի է մէկին շատ հասնի, մէկին քիչ, ինձնից նեղանան: Ինքներդ ասէք՝ ի՞նչպիսի աղքատների բաժանեմ և ամեն մէկին քանի ոսկի»: Հարուստը վրայ բերեց. «տէր հայր, երբ դուք էլ չը գիտէք թէ ո՞ւմ կարելի է տալ, Աստուած գիտէ, նա ձեզ ցոյց կը տայ: Ով էգուց առաւօտ առաջինը ձեզ մօտ գայ, նրան տուէք բոլոր փողը»: Քահանայի ծխի մէջ մի աղքատ կար, շատ երե-

խաների տէր. ինքը տկար էր և չէր կարում աշխատել: Այդ երեկոյ Սաղմոսն առաջը դրած կարդում էր, յանկարծ այս խօսքերը աչքովը ընկան. «երիտասարդ էի և ծերութեան հասայ. բայց չը տեսայ, որ արդար մարդը երեսի վրայ անուշադիր թողնուի ու որդիքը գնան դռնէ դուռ հաց մուրալու»: Աղքատը հառաչելով ասեց. «ճիշտ չէ Սաղմոսի ասածը, ահա մէկը ես, Աստուած ինձ թողել է երեսի վրայ, իսկ ես կեանքումս վատ բան արած չեմ: Պիտի գնալ քահանայի մօտ և հարցնել թէ ինչո՞ւ այսպիսի անճիշտ խօսքեր են գրուած Սուրբ Գրքի մէջ»: Առաւօտը վաղ ճամբայ ընկաւ դէպի ծխական քահանայի տուն: Տէրտէրը լուսամուտից տեսնելով ասեց. «անշուշտ Աստուած է սրան այսպէս վաղ ինձ մօտ ուղարկողը. սրա բախտն է, որ առաջինն է գալիս»: Դուռը բաց արեց և նրա հարցին պատասխանելու փոխարէն հազար ոսկին տուեց ձեռք:

15. ՄԱՐԴԻԿ ՈՒ ՈՇԽԱՐՀ

Մի բարերար հոգի կար, նրա փափագն այն էր, որքան կարելի է շատ բարութիւն անել մարդկանց: Երկար մտածում էր թէ ի՞նչպէս վարուի, ի՞նչ տեսակ բան շինի, որ նրանով ոչ ոքի սրտի չը դիպչի, ընդհակառակը ամենին էլ օգտակար լինի: Բարերար հոգին երկար մտածելուց ետ որոշեց հետևեալը. ընտրեց մի պարապ տարածութիւն, որտեղով մեծ բազմութիւն էր անց ու դարձած անում. շինեց մի քարվանսարայ, մեծ ընդարձակ բակով. ամբար տուեց այնտեղ ամեն բանից, ինչ

որ կարող էր մարդ արարածին օգուտ և բաւականութիւն տալ: Նրա մտածմունքն այս էր. «Թող անց ու դարձ անողները, երբ սիրտներն ուզի, այստեղ մնան, ուտեն, խմեն, ինչ որ նըրանց հարկաւոր է, վերցնեն. երբ բոլորը կը հասնի, ես դարձեալ կը գամ, քարվանսարան ամեն բարիքներով կը լցնեմ»:

Ասածի պէս կատարեց, ամեն ինչ կարգով սարքով թողեց ու հեռացաւ և սպասում էր թէ ինչ կը լինի հետեանքը: Ահա եկան բարի մարդիկ իջևանեցին, կերան, խմեցին, գիշերը հանգըստանալով միւս առաւօտ իրանց ճամբէն շարունակեցին: Չատերն ամբողջ օրերով մնում էին, շատերն իրանց պէտք եղած բաները վերցնում, տանում, բայց չէին մոռանում լիասիրտ բարեմաղթութիւն անել քարվանսարան հիմնող անյայտ բարերարին: Միայն յետոյ պատահեց, որ այդտեղ եկան լպիրշ, անամօթ և կռուարար մարդիկ, սրանք վրայ թափուեցին, սկսան ագահաբար լափլափել, յետոյ ինչ որ կար, չը կար՝ բոլորն իրանց տոպրակները, պարկերը հաւաքել: Աչքածակ ճամբորդների մէջ մեծ վէճ ու անբաւականութիւն ծագեց. ամենից զօրեղը գոռում էր՝ բոլորն իմն է, չը համարձակուէք ձեռ տալ, միւսները պատասխանում էին՝ ոչ, մենք էլ բաժին ունենք: Սկսան կռուել, մէկ մէկու ձեռից խլել բաները, ոտի տակ տալով կոտորտել, որ ուրիշին չընկնի: Իրանց խայտառակ արարքով այնտեղը հասցրին, որ ժողոված բարիքները ոչ մէկին պէտք չեկաւ: Ամեն բան փչացնելուց ետ սկսան քարվանսարայի անկիւններում ցրտից կուչ գալ, քաղցածութիւնից տանջուել, մէկ մէկու վիրաւորել, քարվանսարայ հիմնողին հայնոյել, թէ ինչո՞ւ այդպիսի անխելք բան է արել, ինչո՞ւ կարգ պահանդներ չի գրել, ինչո՞ւ է քիչ պաշար հաւաքել, կամ ինչո՞ւ ամեն մի վատ մարդու ներս է թողել: Ամեն մինը կարծում էր թէ ինքն է միայն պատուականը, իսկ միւսները վատ են: Ամենն էլ քաղցած, ցրտատար եղած, զայրացած թողին քարվանսարան հեռացան, ամեն տեսակ հայնոյանքներ թափելով իրար գլխի. նզովում էին նոյնպէս քարվանսարան և նրա շինողին:

Բարերար հոգին Աստուած է, քարվանսարան աշխարհս, անցորդները մարդիկ: Այսպէս մարդիկ, երբ մոռանում են Աստուած պատուէրը թէ՛ սիրիւր ընկերիւր ինչպէս քո անձը, կործանում են թէ իրանց և թէ ուրիշների կեանքը. երբէք չեն մտածում, որ իրանք են մեղաւորը: Վատն իրանց կեանքն է, բայց նրանք հայնոյում, մեղադրում են ուրիշներին:

### 17. ԿՈՎԱՐԱԾԻ ԱԹՈՌ

Մի իշխան օրոշեց իրա ժողովրդին ճաշ տալ, ուրախացնել. հիւրերին ընդունելն ու սեղանին նստացնելը յանձնեց մովրովին: Բոլորից վերջը եկաւ մի ուժեղ սարեցի, բոլի կովարած, նայեց դէս դէն, տեսաւ բոլոր աթոռները բռնուած են, դիմեց մովրովին, աթոռ խնդրեց, որ նստի:— «Ահա, ստացիր քո աթոռը. պատասխանեց մովրովը հասցնելով նրա կողքին մի քացի: Սարեցին

անխօս հեռացաւ նրա մօտից, բայց ճաշը վերջացնելուց ետ ուղղակի մօտեցաւ մովրովին, իբրև կովարած, ինչքան ծնկնում ուժ ունէր, նրա լաւ տեղին մի թունդ քացի կպցրեց: Մեծ իրարանցում ու հարահուրոց բարձրացաւ պալատի մէջ. գնացին իշխանին յայտնեցին. «հապա չե՞ս ասիլ, մի բոխ սարեցի ժողովրդի առաջ քացիով խփեց մովրովին, խայտառակեց»: Սարեցուն բռնած տարան իշխանի առաջ, ուր քաջաբար այս պատասխանը տուեց. «ողորմած տէր, ես ճիշտ է, սարեցի մարդ եմ, բայց յարգում եմ սեպհականութեան սկզբունքը: Ես չէի կամենում հետս տանել ձեր ապրանքը. ձեր մովրովին քացի տալով վերագարձրի նրան այն աթոռը, որ նա ճաշից առաջ ինձ առաջարկել էր: Եթէ ասածիս չէք հաւատում, իրանից տեղեկացէք»:

18. ԹԱԳԱԻՈՐ ԵՒ ՊԱՆԴՈՎԱՏԷՐ

Անգլիայի թագաւորը ճամբորդելիս շատ անգամ փորձով տեսել էր թէ ինչ սարսափելի գրներ են պահանջում հիւրանոցներում մնալու և ճաշելու համար: Վերջին ճամբորդութեան միջոցին վճռեց՝ ոչ մի տեղ կառքից չիջնել: Երբ երկրի միջով անցրում էր, կանգ առաւ մի պանդոկի առաջ. մինչև կառքի ձիանը փոխելը պատուիրեց, որ երեք թարմ հաւկիթ բերեն: Թագաւորը անեփ խմելով կուլ տուեց միջուկը և իսկոյն արժէքը հարցրեց. «ինչ պիտի տամ»:— «Երկու հարիւր արծաթ, պատասխանեց պանդոկատէրը:— «Ի՞նչպէս, զարհուրած հարցրեց թա-

գաւորը, երկու հարիւր արծաթ. միթէ հաւկիթներն այսչափ հազուադիւր են ձեր գաւառում»:— «Ո՛չ, տէր իմ, հաւկիթները մեր գաւառում հազուադիւր չեն, բայց թագաւորներն էլ ամեն օր չեն անցկենում մեր պանդոկի դռնով»:

19. ՀՆԱՐԱԳԷՏ ՈՒՂԵԻՈՐ

Մի ուղևոր փոթորկի, կարկտի տակ ընկած և ցրտատար եղած հասաւ մի պանդոկ, ուր այնքան ժողովուրդ էր լցուած, որ ննար չըկար բուխարուն մօտենալու: Բարձր ձայնով պանդոկատիրոջն ասեց. «տար իմ ձիու առաջ մի լիտր ոստրէ ածա»:— «Ձեր ձիու առաջ, զարմացած հարցրեց նա, ինչպէս կարող է ձին ոստրէ ուտել»:— «Քեզ ինչ հրամայում եմ, անխօս կատարիր, պատասխանեց ուղևորը: Պանդոկատէրը ոստրէն ձեռին գնաց գոմը. կանգնած մարդիկ իրար ետնից վազեցին նոյնպէս, որ տեսնեն ինչպէս է ձին ոստրէ ուտում: Ուղևորը մենակ մընալով տեղաւորուեց բուխարու առաջ և տաքացաւ ինչպէս սիրտն ուզում էր: Շուտով պանդոկատէրը վերագարձաւ գոմից և ասեց. «պատուելի հիւր, ձեր ձին չի կարողանում ոստրէ ուտել, զլուխս մեռնի, թէ սուտ ասեմ»:— «Վնաս չըկայ, թո՛ղ չուտի, բեր, դիր այս սեղանի վրայ, ես ինքս կուտեմ, երբ շորերս լաւ ցամաքած կը լինեն»:

20. ԹԱԳԱԻՈՐՆ ՈՒ ԳԱԻԱՌԱՊԵՏԸ

Բոհեմիայում մեծ սով էր. Յովսէփ կայսրը

հրաման արեց մեծ քանակութեամբ ցորեն ուղարկել Բոհեմիա և սովալլուկ բնակիչներին բաժանել:

Մի օր հասարակ զինուորականի վերադուր հագած, մի ծառայ ետևից գցած մտաւ բոհեմիական փոքր քաղաք: Գաւառապետի տան առաջ կանգնած էին ահագին սայլեր ցորեն բարձած, նրանց չորս կողմն էլ շարուած էին բազմաթիւ շինականներ իրանց սայլերով և առաւօտից ըսպասում էին ցորենի բաժանելուն: Բայց դուր, խեղճ մարդկանց բան չէին տալիս:

Թագաւորի իշխանած հիւրանոցը գաւառապետի տան դիմացն էր. լուսամուտից նկատել էր այս բոլորը: Դուրս եկաւ գիւղացոց մօտ և մի ծերի հարցրեց. «Վալի, սրբան ժամանակ է, որ այստեղ սպասում էք»:— «Ա՛խ, պարոն, ինչ ասեմ, ութ ժամից աւելի է, պատասխանեց շինականը. մեր խեղճ ձիանը քաղցից կոտորուեցին: Բացի այդ, մեր կանայքն ու երեխէքը սրպասում են տանը աչքները կթած»:— «Ի՞նչ է պատճառը, որ այսքան ուշանում էք, հարցրեց ծպտուած կայսրը:— «Պարոն գաւառապետը հիւրեր ունի, ասում են՝ նրանց հետ թուղթ է խաղում, մեր պատճառով չի ուզում դուրս գալ»: Կայսրը լուսամուտից նայեց. երբ տեսաւ, ուղիղ որ գաւառապետը նստած է թղթի սեղանի մօտ, մտաւ ներս: Դէմն եկող զրազրին ասեց. «պարոն գաւառապետին յայտնեցէք, որ ես ուզում եմ նրան անպատճառ տեսնել»:— «Պարոն գաւառապետն այժմ չի կարող ձեզ ընդունել,

պատասխանեց զրազրը:— «Ես շատ հարկաւոր խօսք ունեմ, յայտնեցէք նրան խսկոյն և եթ, պնդեց կայսրը: Գրազիրը գնաց, երկար ժամանակից ետ վերջապէս գաւառապետը երևաց և թթու երեսով հարցրեց. «Ո՞վ էք, պարոն»:— «Ես կայսերական մի սպայ եմ, հանգիստ ու քաղաքավարի պատասխանեց կայսրը:— «Ի՞նչ էք կամենում ինձանից»:— «Խնդրում եմ, Աստծու սիրու համար բաժանէք ցորենը աղքատներին, որոնք ձեր պատճառով ութ ժամ է դուրսն սպասում են»:— «Այդ ձեր գործը չէ, գոռաց մեծաւորը:— «Մարդկանց հետ պիտի մարդավարի վարուել և ոչ թէ նրանց սպասեցնել առանց պատճառի: Խղճի դէմ բան է, այսքան ցորեններն այստեղ և շինականները սովից տանջվում են»:— «Այդ ձեր գործը չէ, գնացէք ձեր բանին, աւելի բարձր գոռաց գաւառապետը: Կայսրն այլ ևս նրա կոպտութեան չը համբերեց, վերարկուն ետ քաշելով ցոյց տուեց կրծքի վրայի կայսերական աստղը և գոչեց դէպի գաւառապետը. «լաւ տեսէք, թէ ո՞վ եմ: Հէնց այս վայրկեանից զըրկուում էք ձեր պաշտօնից»: Գրազրին դառնալով հրաման արեց. «գաւառապետի տեղ կանգնեցէք և ցորենը բաժանեցէք շինականներին»:

21. ՍՐԲԱԶԱՆՆ ՈՒ ԱՒԱԶԱԿԸ

Երկար ժամանակ մի աւագակի փնտրում էին: Մի անգամ նա ծպտուած մտաւ քաղաք. այստեղ նրան ոստիկանները ճանաչեցին և ընկան ետնից: Աւագակը փախաւ նրանցից դէպի

սրբազանի բնակարանը. բակի դուռը բաց էր, մտաւ ներս: Սպասաւորը հարցրեց. «ինչ ես ուզում»: Աւագակը չը գիտէր ինչ ասի, առանց երկար մտածելու ասեց. «սրբազանին եմ ուզում»: Սրբազանը աւագակին ընդունեց և հարցրեց. «ինչ գործի համար ես եկել ինձ մօտ»: Աւագակն ասեց. «ես աւագակ եմ, իմ եանից են ընկած, ուզում են կախնաւորել, ինձ թագըրու, թէ չէ՝ քեզ կը սպանեմ»: Սրբազանն ասեց. «ես ծեր եմ, մահից չեմ վախենում, բայց քեզ վրայ ափսոսս գալիս է. Գնա այն սենեակը, յոգնած ես, հանգստացիր, ուտելու բան կուղարկեմ քեզ»: Ոստիկանները չը համարձակուեցին մտնել սրբազանի բնակարանը: Աւագակը գիշերը պիտի մնար այնտեղ. քիչ հանդարտուել էր, երբ սրբազանը մտաւ նրա մօտ և խօսեց. «սիրտս ցաւում է, որ դու ցրտատար ես ու քաղցած և քեզ իբրև գայլի հալածում են. միայն ես աւելի ցաւում եմ նրա համար, որ շատ սնօրէն բաներ ես բռնել և հոգիդ կորցրել: Ձեռ վերցրու վատ գործերից»: Աւագակը պատասխանեց. «ոչ, վատ գործերից ետ կենալ չեմ կարող. աւագակ ապրել եմ, այդպէս էլ կը մեռնեմ»: Սրբազանը դուրս եկաւ նրա մօտից, բաց թողեց բոլոր դռները և պառկեց, քնեց: Գիշերուայ կէսին աւագակը վեր կացաւ և սենեակները ման եկաւ, շատ զարմացաւ, որ սրբազանը բոլոր դռները կըրնկի վրայ բաց է թողել, ոչինչ չի կողպել: Այս ու այն կողմ աչք ածեց, որ մի բան գողանայ, աչքն ընկաւ մի մեծ արծաթէ մոմակալի վրայ.

ասեց. «սա բաւականի փող կաժենայ, հերիք է ինձ, էլ ծեր սրբազանին սպանելն աւելորդ է»: Վերցրեց ու դուրս գնաց: Ոստիկանները չէին հեռացել սրբազանի տան մօտից, աչքերը սրած նայում էին. հէնց որ աւագակի գլուխն երևաց, վրայ վազելով բռնեցին ու տեսան փեշի տակին մի մոմակալ: Աւագակն ամենայն եռանդով ուրանում էր նախկին բոլոր մեղքերը, ոստիկաններն ասին. «լաւ, եթէ դու առաջուայ գործերդ ուրանում ես, բայց հօ չես կարող այս մոմակալի գողութիւնն ուրանալ: Գնանք սրբազանի մօտ, նա վրէժ կը հաստատի»: Գողին բերին սրբազանի մօտ, ցոյց տուին մոմակալը և հարցրին. «այս բանը ձերն է թէ չէ» — «Այո, իմն է, պատասխանեց նա. Ոստիկաններն ասին, «ձեզանից է գողացել սա. այժմ ձեռին բռնեցինք»: Աւագակը լուռ էր, միայն աչքերը գայլի պէս շրջում էր դէս ու դէն: Սրբազանը ոչ մի խօսք չասեց, ետ դարձաւ սենեակը, վերցրեց մոմակալի միւս հատը, բերեց աւագակին տուեց ու ասեց. «բարեկամ, ինչո՞ւ միայն մէկ մոմակալ ես վերցրել, չէ որ ես քեզ երկուսն ընծայեցի»: Այս լսելով աւագակը լաց եղաւ ու ասեց ոստիկաններին. «ես գող եմ ու աւագակ, կախնաւորեցէք ինձ»: Յետոյ դարձաւ սրբազանին ասեց. «ներիր իմ արարմանը ի սէր Գրիստոսի, և աղօթիր ինձ համար Աստուծոն»:

21. ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ՓԱՅՏԱՀԱՏԸ

Պետրոս Մեծն անտառում մոլորուելով հան-

դիպեց մի ծերունու, որ փայտ էր կտրում: «Աստ-  
ծու օգնութիւնը քեզ վրայ, այ շինական, մաղ-  
թեց թագաւորը:— «Ինձ էլ հէնց Աստծու օգնու-  
թիւնն է պէտք. շնորհակալ եմ, պատասխանեց  
ծերը:— «Երևի մեծ ընտանիք ունես, նրա համար  
կարօտ ես Աստծու օգնութեան»:— «Երկու տղայ  
և երկու աղջիկ ունեմ, աւելի չէ»:— «Բեռդ այն-  
քան ծանր չէ, խօսեց թագաւորը, այսպէս որ ե-  
ռանդով աշխատում ես, փողերդ ի՞նչ ես անում»:—  
«Ես վաստակած փողերս երեք մաս եմ անում.  
մէկը՝ պարտքս եմ վճարում, երկրորդը՝ շահով  
եմ տալիս, երրորդը՝ ջուրն եմ գցում»: Թագա-  
ւորը մտածեց ու չիմացաւ, ի՞նչ է նշանակում  
ծերունու ասածը՝ պարտք վճարել, շահով տալ և  
ջուր գցել: Ծերունին բացատրեց այսպէս. «պարտ-  
քըս վճարելն այն է, որ հօրս ու մօրս եմ պա-  
հում. շահով տալն այն է, որ տղերանցս կերակ-  
րում եմ, իսկ ջուրը գցելն այն է, որ աղջկերան-  
ցըս մարդու եմ տալու»:— «Ի՞նչ խելօք գլուխ ես  
ունեցել, ծերունի, ասեց թագաւորը, այժմ ինձ  
դուրս բեր այս անտառից, ես ճանապարհը չեմ  
գտնիլ»: Եինականն ասեց. «ճանապարհը ինքդ էլ  
կը գտնես, ուղիդ գնա, նախ թեքուի աջ, յետոյ  
ձախ, յետոյ կրկին աջ»:— «Այդ բո ասածը գլու-  
խըս չի մտնում, արի, ինքդ առաջնորդելդ դէպի  
դաշտ, ասեց թագաւորը:— «Պարոն, ես քեզ ա-  
ռաջնորդելու միջոց չունեմ, գիւղացի մարդ եմ,  
ինձ համար ժամանակը թանգ է»:— «Թանգ է,  
ես էլ դրա համար քեզ կը վճարեմ»:— «Այդ ու-  
րիշ բան է, եթէ կը վճարես, գնանք»: Երկուսով

նստան երկանիւ սայլը ու գնացին: Թագաւորը  
շինականին հարցրեց. «Եեռու տեղ արդեօք եղել  
ես»:— «Հա, մի քանի տեղ եղել եմ»:— «Թագա-  
ւորին քո օրում տեսած կան»:— «Ձեմ տեսել  
թագաւորին, բայց արժէր տեսնելը»:— «Ուրեմն  
լաւ, հէնց որ դաշտ դուրս գնանք, թագաւորի-  
կը տեսնես»:— «Նրան ի՞նչպէս ճանաչեմ»:— «Բո-  
ւոր մարդիկը կը լինեն գլխաբաց, մենակ թագա-  
ւորը կը լինի գդակով»:

Դաշտ դուրս եկան. ժողովուրդը Պետրոս  
Մեծին տեսնելուն պէս, մեծ թէ փոքր գդակնե-  
րը վերցրին: Փայտահատը չռած աչքերով որո-  
նեց բազմութեան մէջ ու թագաւորին չը գտաւ,  
դարձաւ իրա հետ նստողին հարցրեց. «հապա ո՞ւր  
է թագաւորը»: Պետրոսը պատասխանեց. «տես-  
նում ես, որ մենք երկուսս ենք մնացել գդակով,  
ուրեմն կամ ես եմ թագաւորը կամ դու»:

23. ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԲԱՁԷ

Թագաւորը որս անելիս նապաստակի ետնից  
թողեց իրա սիրելի բազէն, ինքն էլ ձին քշեց,  
Բազէն ճանկեց նապաստակին. թագաւորը հասաւ,  
որսը խլեց նրա ճանկերից ու ջրի ման եկաւ,  
որ ծարաւը կտարի: Տեսաւ մի բաշ, որից ջուրը  
բարակ ձըլձըլում էր: Թագաւորը ծոցի թասը  
հանեց ու ջրի տակ բռնեց: Կաթ կաթ թափուե-  
լով թասը լցուեց: Թագաւորը մօտեցրեց բերա-  
նին, որ խմի, յանկարծ բազէն թրթրոաց ձեռի  
վրայ և թևերով ջուրը շող տուեց: Թագաւորը  
թասը նորից բռնեց ջրի տակ, երկար սպասեց

մինչև ջուրը պռուռնկէ պռուռնկ լցուեց. հէնց որ երկրորդ անգամ բերանը տարաւ, որ խմի, բազէն թրթրուաց, թրպըրտաց թևերով և ջուրն էլի թափեց: Երրորդ անգամ համբերութիւնը լարելով թասը լցրեց և երբ շրթունքներին մօտեցնում էր, բազէն դարձեալ թևերով խփեց, թափեց: Այլ ևս թագաւորը չը կարաց բարկութիւնը պահել, ինչքան բազկում ուժ ունէր, բազէին խփեց քարի ճակատով ու անշնչացրեց: Այդ միջոցին նրա մօտ եկան թիկնապահները: Մէկը նրանցից վազեց վերև, դէպի աղբիւրի ալը, որ շատ ջուր գտնի ու շուտով թասը լցնի: Նա թասը դատարկ բերեց ու ասեց. «տէր արքայ, այնտեղի ջուրը չի կարելի խմել, աղբիւրի աղնում մի օձ տեսայ, որ թոյնը ջրի մէջ էր թափում: Լաւ է որ բազէն թափել է»:— «Բայց տես, բազէին ինչպէս վատ վարձատրեցի, խօսեց թագաւորը, նա ջուրը թափելով ազատում էր իմ կեանքը, իսկ ես նրան շնչահան արի»:

24. ՍԱԴԸՂԻ ԱՐԴԱՐ ՎՃԻՌԸ

Բաղդատի մի նշանաւոր վաճառական մեռել էր Հնդկաստանում. նա ժառանգներ էր կարգել իրա երկու տղերանց, որ իրանց քրոջը ամուսնացնելուց ետ ունեցած կարողութիւնը հաւասար բաժանեն: Բացի այդ նա երեք հազար ոսկի ընծայ էր թողնում նրան, ով աւելի սիրելիս կը լինի իրան: Մեծ տղէն հօր մահը սգալով նրա համար մի դամբարան շինեց, իսկ փոքրն իրա ժառանգութեան մի մասն աւելացրեց քրօջ օժիտի

վրայ: Լսողները գրեթէ միաբերան ստում էին՝ «մեծ տղէն աւելի սիրում է հօրը, իսկ փոքրը աւելի սիրում է քրօջը: Ուստի մեծին պիտի պատկանի երեք հազար ոսկին»: Վեղիը Սաղըղը արդարութեամբ վճիռ անելու համար կանչել տուեց երկու եղբօրը ու մեծին ասեց առանձին. «գիտես ինչ, հայրդ չի մեռել, նա վերջին տկարութիւնից պրծած վերադառնում է այստեղ»:— «Օրհնեալ լինի Ալլահը, որ առողջացրել է հօրս, պատասխանեց երիտասարդը տարակուսելով, բայց ինչ անեմ այս դամբարանը, որ ինձ վրայ այնքան փող է նստել»: Յետոյ վեղիը կանչեց փոքրը տղին ու նոյն բանը յայտնեց առանձին. — «Փառք լինի Ալլահին, որ առողջացրել է, պատասխանեց նա, ես հօրս կը վերադարձնեմ բոլոր ունեցածս, բայց շատ կը խնդրեմ, որ քրոջս մօտ թողնի այն մասը, որ ես նրան նուիրել եմ»:— «Անհոգ կաց, խօսեց Սաղըղը. ոչինչ չես վերադարձնիլ, որովհետև հայրդ իրօք մեռած է, բացի այդ՝ կրստանաս նրա թողած երեք հազար ոսկի ընծան, որովհետև զու աւելի անկեղծ ես սիրում հօրդ քան եղբայրդ»:

25. ԲՈՒԲԻԿՆ ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆԸ

Մի բանուոր գործատեղից գնում էր, նստեց մի մեծ տան դիմաց, որ հանգստանայ: Բոբիկ էր, ոտները քարերին դիպչելուց արիւնշաղախ էին դառել: Նայեց տան վրայ և ինքն իրան ասեց. «երևի սրա տէրը շատ հարուստ է, որ այսպէս տուն է շինել»: Այդ ըրպէին տեսաւ՝ տան-

տէրը գալիս է կառքով, գեղեցիկ ձիան լծած-  
 ատես, տես, ինչ ձիան է լծել կառքին, անպատ-  
 ճառ հիանալի կոշիկներ էլ կունենայ ոտներին-  
 իսկ ես ոչ այն ունեմ, ոչ այն. բոբիկ եմ ման-  
 գալիս: Է՛հ, կեանքը դրանցն է, խեղճ մարդու  
 օրը նգոված:

Կառքը դռներին մօտեցաւ թէ չէ, ծառա-  
 ները դուրս թափուեցին, տիրոջը կառքից վերց-  
 րին ու ձեռների վրայ տարան ներս: Բոբիկ  
 բանուորը մնաց տեղը սառած. շատ փոշմանեց,  
 որ նրան երանի է տուել, որովհետև քամբախտ  
 մեծատունը անդամալոյծ էր:

26. ԹԱԳԱԻՈՐ ԵՒ ԽՐՃԻԹ

Մի թագաւոր պալատ էր շինել և նրա ա-  
 ռաջ մի այգի տնկել: Այգու մուտքի մօտ մի  
 խրճիթ կար, որի մէջ ապրում էր մի խեղճ մարդ:  
 Թագաւորը կամեցաւ խրճիթը հեռացնել, որ այ-  
 գու ճակատը չը փչացնի. ուղարկեց նախարա-  
 րին աղքատ մարդու մօտ, որ խրճիթն առնի:  
 Նախարարն այսպէս խօսեց. «դու բախտաւոր  
 մարդ ես, թագաւորը կամենում է քո խրճիթն  
 առնել: 10 ուրբլի չափի, բայց թագաւորը քեզ  
 տալիս է 100 ո»։ Աղքատն ասեց. «ո՛չ, խրճիթը  
 100 ուրբլով չեմ ծախիլ: Նախարարն ասեց.  
 «եթէ այդպէս է, թագաւորը 200 ո. կը տայ»։  
 Աղքատն ասեց. «ոչ 200-ով կը տամ և ոչ 1000-  
 ով: Իմ պապն ու հայրը ապրել ու մեռել են այս  
 խրճիթում, ես նրա մէջ եմ ծերացել և նրա մէջ  
 էլ շունչս կը փչեմ, եթէ Աստուած կամենայ»:

Նախարարը զնաց թագաւորի մօտ և ասեց. «աղ-  
 քատը շատ իրա սասածի մարդ է, փող չի վերց-  
 նում: Թագաւոր, այդ մարդուն կոպէկ էլ մի  
 տալ, այլ հրամայիր անփող քանդել խրճիթը, դը-  
 րանով ամեն ինչ կը վերջանայ»: Թագաւորն աս-  
 ւեց. «ո՛չ, այդպիսի բան չեմ ուզում»: Այն ժա-  
 մանակ նախարարն ասեց. «ուրեմն ի՞նչ պիտի  
 անել. մի՞թէ կարելի է թոյլ տալ, որ պալատի  
 դէմուղէմ խրճիթը կանգնած մնայ: Ով էլ նայի  
 պալատին, կասի՝ երևելի շէնք է պալատը, բայց  
 ափսոս որ խրճիթը նրա տեսքը փչացնում է: Ե-  
 րևի, կասի, թագաւորը փող չի ունեցել, որ խըր-  
 ճիթն առնի»: Իսկ թագաւորը պատասխանեց. «ոչ,  
 իմ կարծիքով, ով մտիկ անի պալատին, նա կա-  
 սի՝ երևում է թագաւորը շատ փող է ունեցել,  
 որ այդպիսի հոյակապ պալատ է շինել, և երբ կը  
 նայի խրճիթին, կասի՝ երևում է, այս թագաւո-  
 րի սրտում արդարութիւն էլ է եղել: Այսպէս լաւ  
 է, թող խրճիթը մնայ իրա տեղը»:

27. ԱՄԵՆԱՊԱՏՈՒԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Մի անգամ առատաձեռն Հաթամ Թայուն շըր-  
 ջապատողները գովաբանում էին և ասում. «դու  
 ամենապատուական մարդն ես, քեզ պէս պատու-  
 ական մարդ չը կայ աշխարհում»: Թային պա-  
 տասխանեց. «ո՛չ, սխալուում էք, ես չեմ ամենա-  
 պատուականը»: — «Ուրիշ ո՞վ կարող է լինել, հարց-  
 քին շըջապատողները, — «Ահա ասեմ ձեզ, խօ-  
 սեց Թային, մի օր ես քառասուն ուղտ էի մոր-  
 թել ու մեծ հացկերայթ ուարձել: Ճաշից ետ գը-

նացել էի դաշտ զբօսնելու. տեսայ մի աղքատ մարդ, այնտեղ փուշ ու տատասկ էր ժողովում, որ տանի ծախի և նրա գնով հաց առնի, ուտի: Ես նրան ասի. «այ խեղճ մարդ, ի՞նչ ես չարչարում ու ձեռներդ արիւնշաղախ անում. գնա Հաթամ Թայու տուն, այսօր նա մեծ ճաշ ունի, ամեն բան կայ, կեր, ինչքան սիրտդ ուզում է»: Նա պատասխանեց ինձ. «ով որ կարողանում է իրա ճակատի քրտինքով իրա հացը վաստակել, նա կարիք չունի Հաթամ Թայու ճաշկերութիւն»։ Եւ չը գնաց: Հաւատացէք, իմ բարեկամներ, այն աղքատ մարդն իրա մտածմունքով ու արարքով աւելի պատուական էր, քան թէ ես»:

28. ՋՐԻ ՀՈՍԱՆԻՔԸ

Մի անգամ չինացի իմաստուն Կօնֆուցիոսի աշակերտները գտան նրան գետի մօտ. վարդապետը նստած էր ափին և ակնսպիշ նայում էր ջրի հոսանքին: Աշակերտները զարմացած հարցրին. «վարդապետ, ի՞նչ օգուտ նայելուց թէ թէ ջուրն ի՞նչպէս է ներքև հոսում. դա շատ հասարակ բան է, դա միշտ եղել է և կը լինի»։ Կօնֆուցիոսը պատասխանեց. «այո, զուր ճշմարիտ էք ասում. դա հասարակ բան է, այդ եղել է և կը լինի և ամեն մէկն այդ հասկանում է. բայց շատ քչերն են հասկանում թէ ջրի հոսանքը ինչպէս նման է ճշմարտութեան ուսմունքին: Ես նայում էի ջրի ալիքներին և մտածում այդ մասին: Ջրերն անդադար հոսում են և հոսում են գիշեր ցերեկ այնքան հեռու, մինչև միա-

խառնըում են մեծ ովկիանոսում: Դրա պէս է և ճշմարտութեան ուսմունքը, աշխարհի սկզբից հոսել է մինչև մեր օրերը առանց կանգ առնելու: Մենք նոյն կերպ պիտի վարուենք, որ ուսմունքը հաղորդենք նրանց, որ մեզնից յետոյ պիտի ապրեն, որպէս զի նրանք էլ մեզ նման հաղորդեն իրանց որդոց ու թոռներին և այսպէս շարունակուի մինչև զարբերի վերջը»:

29. ԷՇ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Էշը դադարկ մտուրի առաջ ննջում էր. յանկարծ մի բան գոմի դուռը թխկացնելով նրան թարժած արեց: Եկողը ծիծեռնակն էր, վռազ ներս ընկաւ ու էշին հրամայեց. «դուրս արի գնանք, ինձ ուղարկել են որ քեզ տանեմ, կանչում են, էգուց տանը հարսանիք կայ»: Էշի քուռակը վշտացած խօսեց, «այս ինչ կարգ է, մայրիկ, քեզ պէս պառաւին հարսանիք են կանչում, ինձպէս ջանէլին աչքից թողում: Չէ որ ես քեզանից սիրուն եմ ու կարող եմ քեզանից լաւ պարել ու երգել»: Էշը խոր անի բաշեց ու ասեց քուռակին. «միամիտ ես, անուշ զաւակ, պարելու ու երգելու համար որ լինէր, ի հարկէ քեզ կը կանչէին, բայց երևի հարսնքատանը կամ փայտն է պակաս կամ ջուրը, դրա համար ինձ են կանչում, որ գլուխս ու արևս ջարդելով բանացնեն»:

30. ՄԵԾԱՏՈՒՆ ԵՒ ԱՆՅՈՐԴ

Դեղեցիկ ապարանքի մէջ, որից այժմ մի քանի թափթփուած քարեր են մնացել, ժամանա-

կով ապրում էր մի շատ հարուստ մարդ: Նա անչափ փող էր ծախսել, իրա բնակարանը գարգարել, բայց աղքատ տնանկներին բարութիւն անելու համար կոպէկ տալը խնայում էր:

Մի օր խեղճ անցորդ կանգնեց նրա ապարանքի դռանը և գիշերը մնալու օթեան խնդրեց: Մեծատունը վաճառեց նրան անսիրտ կերպով և ասեց. «Իմ ապարանքը հիւրանոց չէ, որ ամեն մի աղքատ գայ գիշերը չնելու տեղ ուզի»: Օտարականը նրան ասեց. «մեծատուն, իրաւունք տուէք երեք հարցմունք անեմ ձեզ ու յետոյ իմ ճամբէն շարունակեմ»:— «Իրաւունք եմ տալիս, ինչ ունես, ասա, խօսեց մեծատունը, ես էլ բեզ կը պատասխանեմ»:— «Լաւ, խօսեց անցորդը, ասա ինձ, ձեզանից առաջ այս ապարանքում ո՞վ էր կենում»:— «Իմ հայրը, պատասխանեց մեծատունը:— «Իսկ ձեր հօրից առաջ ո՞վ էր կենում»:— «Իմ պապը»:— «Իսկ ձեզանից ետ ո՞վ է բնակուելու այստեղ»:— «Եթէ Աստուած կամենայ, իմ որդին»: Օտարականը խօսքը շարունակեց այսպէս. «Եթէ ամեն մի նա այստեղ բնակվում է որոշ ժամանակ և եթէ մէկը գնում է, միւսը գալիս, ուրեմն դուք անցորդներ էք և ձեր ապարանքը մի հիւրանոց է: Էլ ինչո՞ւ համար էք այնքան փող ծախսում գարգարանքի համար, երբ նրա մէջ կենում էք այդքան կարճ ժամանակ: Աւելի լաւ չէ, որ բարի և գթած սիրտ ունենաք զէպի խեղճերը, որպէս զի ձեր համար երկնքում մի յաւիտենական բնակարան պատրաստէք»: Մեծատունը զգացուած այս խօսքերից օտարա-

կանի խնդիրը կատարեց և այն օրից գարձաւ մարդասէր ու ողորմած հոգի:

31. ԹԱԳԱՒՈՐԱՅ ԹԱԳԱՒՈՐ

Հին ժամանակ Անգլիայում իշխում էր հզօր կանուտ թագաւորը: Մի անգամ դուրս եկաւ ծովափին զբօսելու, նստեց, աչքը գցեց ծովի հեռուն ու մտքի մէջ ընկաւ: Նրա մօտ էին պալատական մեծերը, կամենում էին թագաւորին զուարճացնել, տխուր մտքերը հեռացնել և շողքորթութեամբ նրա շնորհը վաստակել: Սկսան իրանց մէջ խօսելով երկինք բարձրացնել կանուտ թագաւորի փառքն ու զօրութիւնը: Մէկն ասեց. «միթէ կարելի է որևէ իշխանի հետ համեմատել մեր կանուտ թագաւորին»:— «Ողջ աշխարհում նրա նմանը չի կարելի գտնել, պնդեց միւսը:— «Հզօր թագաւոր կանուտը նուաճել է բոլոր ժողովուրդներին, այժմ միահեծան տէրն է ծովի ու ցամաքի, ասեց երրորդը: Թագաւորն այս խօսքերը լսելուց ետ ասեց. «բերէք իմ գահը և դրէք այստեղ ժայռի մօտ»: Գահը բերին, թագաւորը նստեց վրէն և դարձեալ աչքը գցեց ծովի հեռուն: Այդ միջոցին քամին սաստկանում էր և ալիքները զօրեղ հռնդիւնով ծեփում էին ափին:— «Ձը համարձակուես ինձ մօտենալ, ծով, անեղազին գոչեց թագաւորը. — չէ՞ որ սա պարտաւոր է իմ կամքը կատարել, այդպէս չէ՞, հարցրեց թագաւորը պալատականներին: Սրանք լուռ գլուխ տուին իբրև համաձայնութեան նշան:— «Ե՛տ աւելի մօտիկ եկէք, միասին ծովին մտիկ անենք»: Պալա-

տակահանները մօտեցան: Իսկ մըրրիկը ծովի վրայ  
աւելի ու աւելի կատաղում էր, փրփրած ալիք-  
ներն ուժգնապէս ծեփում էին ափին: Վախկոտ  
պալատակահաններին սարսափը պատել էր, բայց  
սիրտ չէին անում հեռանալ. իսկ թագաւորը հան-  
գիստ նստած ձեռքնում էր իբր ոչինչ չի նկա-  
տում: Մէկ էլ յանկարծ մի ալիք այնպէս դժով  
խփեց ափին, քիչ մնաց թագաւորի գահը շուռ  
տար, բոլոր մեծամեծներին սառը ջրով ողողեց.  
նրանք յղաղակեցին սարսափած և յետ կացան:  
«Իմ մօտ կանգնած ի՞նչպէս էք վախենում ծու-  
վից, հիմի դուք չէ՞իք ասում, որ ես իշխանն ու  
հրամայողն եմ ծովի ու քամիներին»: Պալատա-  
կահանները լռեցին: Թագաւորը նորից գոչեց. «ծով,  
քեզ հրամայում եմ, կանգնիր, չը համարձակուես  
մօտենալ: Միթէ դու չես լսում քո թագաւորի  
հրամանները»: Թագաւորը դեռ այս խօսքերը չէր  
վերջացրել, որ ջրի ալիքը հեղեղեց ափը, պալա-  
տակահանները առանց ետ նայելու փախան: Կանու-  
տըն ինքն էլ վեր կացաւ. երկրորդ ալիքն եկաւ  
ու թագաւորի գահը փախցրեց դէպի ծով: Այն  
ժամանակ Կանուտն ասեց պալատակահաններին.  
«գուր էիք շողոքորթելով իմ փառքը երկինք հասց-  
նում. ձեր աչքով տեսաք թէ ի՞նչպէս եմ ես  
ծովի ու ցամաքի տէր: Սրանից հասկացէք թէ  
թագաւորների ուժը սրբան չնչին է: Չըկայ ուրիշ  
թագաւոր բացի Աստծուց, որի բազուկն իշխում  
է թէ ծովում, թէ ցամաքում և թէ երկնքում»:

### 32. ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ

Քրիստոսից 400 տարի առաջ Սիրակուզա  
քաղաքում նստում էր Դիոնեսիոս անեղ թագա-  
ւորը: Իրա անողորմ ու անիրաւ գործերով այն-  
պէս ատելի էր դարձել բոլոր բնակիչներին, որ  
հաւատացած էր թէ ամենն էլ ցանկանում են ի-  
րան սպանել: Մի օր հրամայեց ձերբակալել Մի-  
րոս անուշով յոյնին, որն իբրև թէ իրա դէմ չար  
մտադրութիւն ունի: Թագաւորը պատուիրեց նը-  
րան բերել իրա մօտ. նա դայրացած դէմքով խօ-  
սեց. «ես տեղեկութիւն ունեմ, որ ժողովրդի ա-  
ռաջ ինձ անարգել ես, անարդար կերպով զրպար-  
տել ես ու չար բան ունես մտքումդ իմ դէմ»:—  
«Ոչ, խօսեց Միրոսը, ես երբէք անիրաւ չեմ  
զրպարտել, այլ միայն քեզ անուանել եմ դաժան,  
խտասիրտ, ինչպէս իրօք ես. քո դէմ ոչ մի չար  
մտադրութիւն չունեմ, այլ մերկացրել եմ քո  
գործած անիրաւութիւնները»:—«Ա՛խ, դու գար-  
շելի, գողաց թագաւորը, միթէ կարծում ես թէ  
այդ արածդ քիչ բան է. հէնց դա բաւական է,  
որ դու շունչդ փչես խաչի վրայ»: Այդ ժամա-  
նակները խաչի վրայ պատիժ կրելը ամենախայ-  
տառակ բանն էր. «ես մեռնելուց չեմ վախե-  
նում, պատասխանեց Միրոսը, կեանքս փրկելու  
համար ոչ մի աղերս չես լսիլ ինձանից, միայն  
ի սէր Աստծու, երեք օր ժամանակ տուր, գնամ  
ընտանիքիս վերջին հրաժեշտ տամ: Իմ տեղը  
երայխաւոր կը թողեմ բարեկամիս, որ ապահով  
լինես, թէ գալու եմ մահուան պատիժը կրելու»:

Թագաւորը մտածեց ու ասեց նրան խորամանկ ժպիտով. «ցանկութիւնդ կը կատարեմ, գընա, երեք օր ժամանակ եմ տալիս. միայն եթէ երեք օրից ետ Սիրակուզում չես երևալ, բարեկամիւ կը խաչեմ քո փոխարէն: Թող երաշխաւորդ կրի քո յանցանքի պատիժը»:

Դիոնեսիոսը այսպէս էր մտածում. «անկասկած է, որ Միրոսը կը գնայ, էլ չի գայ: Ուրեմն թող ժողովուրդն իմանայ, թէ ի՞նչ խաբեբայ և տմարդ արարած է նա»: Միրոսն այլ մտքի էր, գնաց բարեկամի մօտ և ասեց. «Թագաւորն ինձ մահուան է դատապարտել ու միայն երեք օր ժամանակ է տուել, որ գնամ ընտանիքիս հրաժեշտ տամ. խնդրում եմ քեզ, բարեկամ, արի իմ տեղ բանտում երեք օր նստիր իբրև երաշխաւոր, մինչև ես վերադառնամ»:

Մտերիմ բարեկամը ուրախութեամբ յօժարուեց Միրոսի խնդիրը կատարել, համբուրելով նրան ողջերթ մաղթեց ու յետոյ թոյլ տուեց որ իրան տանեն բանտը և կապանքի տակ դնեն:

Միրոսը շտապ թողեց Սիրակուզան և հասաւ այն գիւղը, ուր ապրում էին նրա մայրն ու քոյրը: Աղի աղի լաց եղան խեղճերը, երբ իմացան նրա գլխին եկած պատուհասը, մէկը որդուն էր ողբում, միւսը եղբօրը: Ամեն հնար գործ դրին մի քիչ երկար պահելու տանը, բայց Միրոսը ազատուելով նրանց գրկից ճանապարհ ընկաւ, որ խոստացած ժամանակից չուշանայ: Սարսափելի տաքացած շտապում էր. յանկարծ բարձրացաւ քամին, հուրդաց փոթորիկը, գոռալով իրար դի-

պան ամպերը, հեղեղը թափուեց երկնքից, ջրերը սարերից վազելով լցուան դաշտավայրերը, գետակներ կազմելով ողողեցին ամեն կողմ: Միրոսի առաջ կապտին էր տալիս գետը. արդէն մօտենում էր կամրջին. գետը վարարեց, ուռաւ, ալիքները ափերից դուրս թափուեցին, յանկարծ կամուրջն օրօրուեց, փուլ եկաւ ջրի մէջ, ալիքները կուլ տալով իրանց մէջ սկեցին տարան: Միրոսը զուր տեղն էր ավին ի վեր վազվզում, հեռուն աչք ածում կամ յուսահատ օգնութիւն կանչում: Ջրի վրայ կամ ափերին ոչ նաւակ էր երևում և ոչ առագաստ: Միրոսը մնաց տեղն ու տեղը վըշտից կուչ եկած: Անիրաւ գետը քանի գնում, այնքան ուռչում էր ու ծովի պէս գոռում մռնչում: Ճարահատ Միրոսը ծունկ չոքելով երկնքին այս պաղատանքն արեց. «Ախ, Աստուած, խաղաղացրու այս կատաղած ալիքները, ժամանակը փախչում է, արևը վաղուց է թեքուել ճաշատեղից. օհ, եթէ ես գեռ Սիրակուզա չը հասած նամայր մտնի, բարեկամս պիտի կեանքից զրկուի»: Սև ու պղտոր հեղեղաջրերը վըշշում ու թըշշում էին աւելի անեղ, աւելի ուժգին, ալիքներն իրար գլուխ էին բարձրանում ու ըոպէները սլանում էին իրար ետնից: Յուսահատութիւնը յաղթեց Միրոսին, էլ չըհամբերեց, խիզախաբար թռաւ փրփրած հոսանքի մէջ և ալիքների հետ կռիւ սկսեց ուժեղ թևերով: Բազը բանեց, անվտանգ հասաւ ափին: Բայց հազիւ էր նա մի քանի քայլ փոխել, անա դէմի տնտառից նրա հանդէպ ելան մի խումբ արիւնախում աւազակներ: Միրոսի-

ճանապարհը կտրելով չարագործները նրա ճակատին դէմ արին մահակները:— «Ի՞նչ էք ուզում, բղաւեց դառնացած Միրոսը, ես ոչինչ չունեմ: Իմ բոլոր ունեցածը մի կեանք է, այն էլ ինձ հարկաւոր է, բարեկամիս մահից ազատելու համար»: Այս խօսքերն ասած չասած՝ աղի արտասուքները գլորուեցին Միրոսի թշերի վրայով. նրա հայեացքը այնպէս պողատական ու հոգեկան տանջանքով լի էր, որ աւազակներն իրանց աւազակ տեղով գթաշարժուեցին ու առաջից ետ կանգնելով ճանապարհ տուին:

Առաջ շտապեց տաքացած... արևն այնպէս կէծ էր, կասես գլխին կրակ թափելիս. ծանր տօթից շունչ քաշել չէր լինում. ոչ մի տեղ շուաքի կտոր չըկար: Ծանապարհորդն էլ ուժ չունէր առաջ շարժուելու: Նա ծունկ չորեց ու աղօթեց. «Ա՛խ, Աստուած, չէ՞ որ դու էիր, որ հեղեղների ծոցից անվնաս հանեցիր, չէ՞ որ դու էիր, որ աւազակների ձեռից փրկեցիր: Այժմ նոյնպէս օգնութեան հասիր, Տէր, որ կարենամ բարեկամիս մահից փրկել»: Երեսը գետնին կացրած հեկեկում էր, յանկարծ իրանից մօտիկ ջրի քշքշոց լսեց: Միրոսը մի կերպ փորսող սալով հասաւ բլրի ստորոտը ու տեսաւ մի աղբիւր, զանգակի նման ցուրտ. ընկաւ վրէժն խմեց ինչքան սիրան ուզում էր ու հովացրեց պապակած ջանը: Դարձեալ սկսեց առաջ շտապել: Արդէն ծառերի երկար ստուերները ձգուում էին մարգագետնի վրայ: Երկու ուղևորներ երևացին: Երբ Միրոսը նրանց հասաւ, այս սարսրովի խօսքերն ընկան

նրա ականջը. «այժմ խեղճին խաչելիս կըլինեն»: Այդ խօսքերը վերաբերում էին Միրոսի բարեկամին: Վիշտը սղմեց Միրոսի սիրտը, բարեկամի կեանքի համար զգացած երկիւղը կարծես նրա արիւնաթաթախ ոտներին թևեր էր տուել: Վերջ ի վերջոյ երևաց Սիրուկուզան, մայր մըտնող արեգակն արդէն ոսկեգօծում էր քաղաքի աշտարակների կատարները: Միրոսի հանդէպ էր ելել նրա տան ծերունի վերակացուն, հեռուից ճանաչելով հաւատարիմ ծառան ձայն տուեց. «յետ գնա, ժամանակից ուշացել ես, փախիր այստեղից, մտածիր քո կեանքի մասին: Բարեկամիդ տանջանքի ենթարկեցին, նա ժամէժամ յուսով սպասում էր, որ կը գաս: Լիայոյս էր և չէր հաւատում, որ դու տուած ժամանակից կուշանաս: Նրան ծաղրի առարկայ շինեցին, ճգնում էին հաւատացնել նրան, որ դու խաբեբայի ու մատնիչի մէկն ես. բայց ոչ մի հնարով չըկարացին թուլացնել նրա հաւատը»: — «Ա՛խ, եթէ արդէն ուշ է, եթէ այլևս իմ վերադարձը չի փրկիլ նրա կեանքը, այն ժամանակ նրա պէս ես էլ կը մեռնեմ, որ թագաւորը չը յանդգնի ասել, թէ ես խոստումս չը կատարեցի, բարեկամիս տանջանքի ենթարկեցի: Թող նա երկու կեանք կործանի, բայց միայն իմանայ, թէ բարեկամներն ինչպէս գիտեն սիրել ու վստահանալ մէկ մէկու»:

Արևն արդէն մայր էր մտել, երբ նա հասաւ քաղաքի դռներին: Հեռուից նշմարեց խաչը, որ տնկած էր հրապարակում: Հետաքրքիր ժողովուրդը խրոնրւում էր նրա շուրջը: Տեսաւ թէ

ինչպէս իրա բարեկամին տարան և թոկով խաչի վրայ են բարձրացնում: Էլ չըհամբերեց Միրոսը, սրան, նրան հրելով պատառեց բազմութիւնն ու գոռաց. «սպասիր, դահիճ, դրան մի պատուհասիլ, ահա ես, որի համար դա երաշխաւոր է»: Բազմութիւնն այդ ձայնի վրայ ցնցուեց ու քարացածի պէս լուռ, գմայլած նայում էր, թէ ինչպէս երկու բարեկամներ իրար վզով ընկան և ուրախութիւնից լաց եղան: Կանգնած ժողովուրդը չըդիմացաւ, նա էլ լաց եղաւ:

Այդ լուրն իսկոյն տարածուեց ողջ քաղաքում և հասաւ ահարկու թագաւորին: Ո՛վ հրաշք, յանկարծ ջերմացաւ Դիոնեսիոսի սիրտը և վրայի սառոյցը պոկուեց: Իսկոյն և եթ հրաման արեց, որ մահապարտներին բերեն իրա մօտ: Երբ Միրոսին ու իրա բարեկամին ներկայացրին, թագաւորը նայեց նրանց վրայ սիրալիբ հայեացքով ու բացականչեց. «գուք յաղթեցիք իմ սրտին. փորձով տեսայ, որ աշխարհիս երեսին գոյութիւն ունի բարեկամութիւն ասած բանը. դա հէքիաթ չի եղել: Ես սրտով կուզէի ձեր բարեկամը լինել. ադաչում եմ միք մերժիլ ինձ ընդունելու ձեր սուրբ ուխտի մէջ. թոյլ տուէք, որ ես էլ ձաշակեմ բարեկամութեան ու վստահութեան երջանկութիւնը»:

### 33. ՀԱՐՈՒՍՏ ՈՒ ԱՆԲԱՂԻ

Մի անգամ մարդիկ զրոյց էին անում բաղդաւորութեան մասին. հիւանդներն ասում էին՝ առողջների պէս բաղդաւոր մարդիկ չըկան. փոր-

րերը հաւատացած էին թէ մեծերը միշտ բաղդաւոր են, իսկ աղքատները համոզուած էին, որ բաղդաւորութիւնը միայն հարստութեան մէջն է: Մի ծեր նրանց ականջ էր դնում, երբ նրանք խօսքը վերջացրին, նա այս զրոյցն արեց. «ես մի հարուստ մարդ էի ճանաչում, նա ապրում էր ոսկեգօծ ապարանքում, զարդարւում էր նուրբ ու թանկագին հագուստներով, քաղցր ուտում ու խմում էր, ամեն օր նրա տունը լի էր հիւրերով: Մի անգամ այս հարստի մօտ հիւր եկաւ իրա հին բարեկամը. վաղուց իրար չէին տեսել: Սրտի ցնծութիւնից հարուստը մեծ և փառաւոր հացկերոյթ սարքեց: Սեղանի վրայ դարսուած էին ոսկէ, արծաթէ պնակներով հագուագիւտ խորոտիկներ, իսկ ոսկէ գաւաթների մէջ փրփրում էին ծովերի հեռաւոր ափերից եկած խմիչքները: Հիւրերը նստած էին սեղանին, ուտում, խմում գուարճանում էին, միայն տանտէրն էր, որ ոչ ուտում էր, ոչ խմում, այլ շարունակ զրոյց էր անում հիւրերի հետ: Վերջը նորեկ հիւրն ասեց տանտիրոջ. «ոչ մի տեղ ես չեմ տեսել այսպիսի հարստութիւն, ինչ որ քեզ մօտ եմ տեսնում, կարծում եմ՝ քեզ նման բաղդաւոր մարդ չըպիտի լինի աշխարհում»: Հարուստն անխ բաշելով ձեռը մեկնեց և ոսկէ պնակից մի խնձոր վերցրեց ու տուեց բարեկամին, որ կտրի: Խնձորը կարմրաթուշիկ էր ու տեսքով հրապուրիչ, բայց կտրելուց ետ երկաց, որ որդնու է, մի ճիճու սիրտը կրծում էր: Բոլոր հիւրերը զարմացած նայեցին հարստին: Սա վրայ բերեց. «ահա ճիշտ և

ճիշտ այս խնձորի պէս եմ, զրսից բաղդաւոր եմ երևում, բայց ոչ ովի աչքը չի տեսնում թէ ի՞նչ որդ է կրծում սիրտս»: Այս ասելով հարուստը բաց արեց լանջը և ցոյց տուեց նրա վրայի անբուժելի վէրքը. «ահա իմ բաղդաւորութիւնը, ասեց հարուստը, ինչի՞ս է թանկագին կերակուրը, որի քաղցը համը չեմ տեսնիլ, ինչի՞ս է ոսկէ պնակը, որ նրանով վէրքս չեմ բուժիլ: Ինչի՞ս են գանձերս, որ նրանցով առողջութիւն չեմ կարող ձեռ բերիլ»:

34. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Մի նշանաւոր ըաբբի շաբաթ երեկոնները քարոզներ էր ասում և ժողովրդին ուռուցանում: Բազմաթիւ ունկնդիրները մէջ կար մի տիկին, որ ոչ մի երեկոյ բաց չէր թողնում և ամենից շատ հիանում էր գիտնականի ատենաբանութիւններով: Մի երեկոյ տուն վերադարձաւ շատ ոգեւորուած տրամադրութեամբ և կամենում էր ամուսնուն հաղորդել իրա տպաւորութիւնները: Բայց նա իրա հաշուի մէջ սխալուեց: Շաբաթ օրը միշտ հանդիսաւոր տեսք էր ունենում իրա տունը, այժմ բոլորովին մութ ու խաւար էր: Շէմքում նրա առաջը կտրեց ամուսինը և խիստ ձայնով հարցրեց. «ո՞ւր էիր մինչև հիմի»:— «Ես լսում էի մեր մեծ ըաբբուն: Ա՛խ, ինչ հիանալի ատենաբանութիւն արեց նա այսօր»:— «Հա՛, հիանալի ատենաբանութիւն. դէ լա՛ւ, երբ ըաբբին քեզ այդքան դուր է գալիս, գնա նրա մօտ, իմացած կացիր, որ քեզ տուն չեմ թողնիլ մինչև

չը թքես քո ըաբբու երեսին: Դրանով կը վարձատրես նրան այն բաւականութեան համար, որ ստանում ես նրա քարոզներից»: Տիկինը մնաց քարացած, սկզբում նա կարծեց թէ ամուսինը կատակ է անում, բայց շուտով համոզուեց, որ իսկի կատակի միտք չունի: Տխմար մարդը շարունակում էր պնդել իրա ասածի վրայ: Խեղճ տիկինը մնալու էր փողոցում, եթէ հարևան կանայք իրանց մօտ չըտանէին: Նա յոյս ունէր, որ երկու երեք օրից ետ մարդը կը փոշմանի արածի վրայ և ձեռ կը քաշի տարօրինակ պահանջից: Սակայն շաբաթ էլ անցաւ ու ոչ մի խընդրանք ու աղաչանք չըկարացին կտարել յամառ մարդուն: Նա հակառակի ձին նստած ասում էր. «կնկանս տուն չեմ թողնիլ, մինչև ըաբբու երեսին չըթքի»: Այդ բանը բերանէ բերան ողջ քաղաքում տարածուելով հասաւ ըաբբու ականջը: Սա իսկոյն մարդ ուղարկեց տիկնոջը կանչելու: Եկաւ տիկինը: Ըաբբին քաղցը կերպով խնդրեց, որ բազմոցի վրայ նստի: Ոչ մի խօսք այն փորձանքի մասին, որ մարդը նրա գլուխն էր բերել: Նա զրոյցն սկսեց այսպէս. «բարի տիկին, աղքետը աչքացաւի համար որևէ զեղ չըգլխտէ՞ք: Այս քանի օր է, աչքերս մըրմնջում են»:— «Վաբբի, ես մի խեղճ, անուս կին եմ, չեմ կարող իմանալ թէ ի՞նչ միջոց կայ քո աչքերի բժշկութեան համար»:— «Միջոցը կայ, տիկին, գործադրելն է մնում: Ինչպէս որ ես պատուիրեմ, եթէ այնպէս անես, աչքերիս ցաւը կանցնի: Այդ միջոցը թուքըն է. եթէ եօթ անգամ թքես աչքերիս մէջ,

ես միանգամայն կառողջանամ): Պարզասիրտ տիկինը մեղք համարեց հակառակուել բաբբու հրամանին. վախվախելով ու անվստահութեամբ կատարեց նրա փափագը, այսինքն եօթ անգամ թրքեց նրա աչքերի մէջ. երբ գործողութիւնը վերջացել էր, բաբբին ասեց նրան. «այժմ, բարի տիկին, գնա ամուսնուդ մօտ և ասա, որ նրա պահանջը կատարեցիր. որ դու ոչ թէ մի, այլ եօթն անգամ թրքեցիր բաբբու երեսին: Այժմ նա քեզ կը ների և նորից կսկսէք միասին խաղաղ ու սիրով ապրել»:

35. ՈՒՍՈՒՑԻՉ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ

Ստրեփոնը մի ագնիւ յոյն երիտասարդ էր, միանգամ ասեց իրա ուսուցչին. «ես շատ եմ ցանկանում գնալ Դելֆի քաղաքը և իմանալ իմ ճակատագիրը: Կարծում եմ, այն ժամանակ աւելի լաւ կը տեսնուի իմ կեանքս և աւելի ճիշտ կընտրեմ այն շաւիղը, որ տանում է դէպի իմաստութիւն»: Յունաստանի Դելֆի քաղաքում կարհեթանոսական տաճար, ուր գլխաւորապէս քրմութեան հիմնադրում էին մարդու գլխին գալիքը և այլն: Ի հարկէ, քրմութեան միայն խաբուում էին մարդկանց, որովհետեւ ճակատագիրը գուշակել ոչ ոք չի կարող, բայց այն ժամանակ Յունաստանում ամենն էլ հաւատում էին: «Դու մի՞թէ այդ մտքին ես, ասեց ուսուցիչը. շատ բարի, ես հետդ կը գամ, գնանք»: Նրանք ճանապարհ ընկան և հասան Դելֆի քաղաքը: Երիտասարդը երկիւղածութեամբ մտաւ խորհրդաւոր անտառը, որ շրջ-

Շապատում էր տաճարը: Երկուով նստան տաճարի մօտ: Ստրեփոնը կարդաց այս բառերը, որ գրուած էին դռան ճակատին «ճանաչիր դու քեզ»: — «Ի՞նչ են նշանակում այս խօսքերը, հարցրեց ուսուցչին:— Շատ հեշտ է նրանց հասկանալը, պատասխանեց ուսուցիչը. մտածիր՝ թէ ո՞վ ես դու և կեանքդ ինչո՞ւ համար ես ստացել: Չէ՞ որ մարդս իրա ապագան իմանալուց առաջ պիտի ճանաչի ինքն իրան»:— «Իսկ ո՞վ եմ ես, հարցրեց երիտասարդը:— Ստրեփոն, դու պատուելի Ագաթիայի որդին ես: Բայց եթէ քեզ մահը վրայ հասնէր, ինչպէս նորերս քո եղբայր Կալլիային պատահեց, ասա, մի՞թէ ես անշունչ մարմին կը դիմէի այս խօսքերով. «սիրելի Ստրեփոն...»: Ոչ, չէի դիմել, շարունակեց ուսուցիչն իրա խօսքը. քո աներևոյթ հոգին է ամեն ինչ, որ մտածում է, գգում է և ցանկանում է—անա թէ ո՞վ ես դու: Այդ անտեսանելի էակին հրամայուած է կառավարել քո կամքը և քո գործողութիւնները. նա ձգտում է նախասահմանուած նպատակին: Քո հոգին ըղձում է նմանուել աստուածութեան և հասնել երանաւէտ խաղաղութեան: Այն մարդը, որի մէջ գերակշռում է հոգին, նման է լաւ սարքած տաւիղին, որ միայն ախորժալուր հնչիւններ է հանում: Իսկ այն մարդը, որ գրտնընդում է իրա մարմնական ցանկութիւնների ու կրքերի իշխանութեան տակ, նա մարմնի ստրուկն է, նրա ստոր հակումները տանում են ամբարիշտ ճանապարհով, ուր ասես նա, որ կենդանութեան օրով հասկանում է իրա նշանակութիւնը և ինքն

իրան հարցնում է՝ արդեօք մօտիկ է իրա նպատակից թէ հեռու, նա ճանաչում է ինքն իրան»։ Երիտասարդը լռած էր։ Ուսուցիչն ասեց. «դէ, վեր կաց մտնենք տաճարը»։— «Ոչ, սիրելի ուսուցիչ, պատասխանեց Ստրեփոնը, ինձ բաւական է դռան վրայի իմաստն էլ. ամօթայի է երևում ինձ իմ անմիտ ցանկութիւնը. այնքան պէտք ունեմ ինձ վրայ աշխատելու, որ ապագայի մասին անհանգիստ լինելու կարիք չը կայ»։ — «Երանի քեզ, Ստրեփոն, ասեց ուսուցիչը. դու չը պիտի գղձաս, որ այս ճանապարհորդութեան ձեռնարկեցիր, որովհետև հասար դու քո ցանկացածին և լսեցիր աստուածային ձայնը։ Դու արդէն գտնըւում ես իմաստութեան ճանապարհի վրայ, դրա ապացոյցն է քո անդորրութիւնը, իբրև ինքնագիտակցութեան առաջին պտուղ»։

36. ՆԱԽԱԽՆԱՄ ՈՒԹԵԱՆ ԱՊԱԻՆԵԼԸ

Մի անգամ դերվիշը գնում էր անտառով և մտածում էր թէ բնութեան մէջ ինչպէս ամեն բան իմաստուն և գեղեցիկ կերպով է կարգադրուած։ Յանկարծ նա նկատեց բազէին բնի մէջ նստած և մի բանով խիստ զբաղուած։ Դերվիշը մօտեցաւ և տեսաւ, որ բազէն ճանկերում բռնած մսից կտուցով պոկում է կտոր-կտոր ու կերակրում ագռաւի տկուռ, անփետուր ճուտին։ «Օ, հրաշափառ նախախնամութիւն, զմայլած բացականչեց դերվիշը, դու անխնամ չես թողնում և նրանց, որոնք անկարող են հոգալ իրանց անունդի մասին։ Դու կամենում ես, որ բոլոր

շնչաւորները պաշտպանութիւն գտնեն կեանքի մէջ։ Քո անհուն բարութիւնը զօրեզ արծուին անգամ ճաշ է մատակարարում անմատչելի ծերպերի գլխին... Օ, ես յիմարի յիմարն եմ եղել։ Մշտական դժգոհ շրջեցի ես բոլոր ծովերը, ակոսեցի բոլոր աշխարհները և այդ ամենն արի անունդս հոգալու համար։ Միթէ այս բազէի օրինակից չը պիտի սովորեմ, որ երկրի իւրաքանչիւր անկիւնում կարող եմ ստանալ այն, ինչ որ այսքան դժուարութեամբ և չարչարանքներով աշխատում էի ձեռ բերել հեռու աշխարհներում»։

Դերվիշը շուտով ընտրեց մի խուլ, առանձին տեղ և վճռեց հանգիստ սպասել ճակատագրին։ Սակայն երեք օր ու գիշեր անցնելուց ետ շնչաւոր չերևաց նրա աչքին, որ ուտելիք տայ։ Նախախնամութեան վրայ ունեցած հաւատը դերվիշի մէջ թուլացաւ. «այս ի՞նչ բան է, միթէ ես աւելի չնչին եմ քան թէ ագռաւի ճուտը, խօսում էր հառաչելով դերվիշը։— «Յիմար արարած, լսուեց յանկարծ մի ձայն, ի՞նչ ողորմելի ես դատում նախախնամութեան մասին։ Ամեն մի գործողութիւն ունի իրա պատճառները և հետևանքները։ Աստծու բարութիւնը անսահման է, բայց անսահման է նոյնպէս նրա իմաստութիւնը. նա պարզեւել է մարդուն անթիւ միջոցներ, որոնցով նա կարող է գոհացնել իրա պահանջները։ Խելացի կերպով օգտուիր այդ միջոցներից և կըտեսնես նրանց հետևանքը։ Եթէ դու կամենում ես նմանուել թռչուններին, այն ժամանակ նմանուիր բազէին և ոչ թէ ագռաւի ճուտին։ Քեզ աւելի

քաղաքաւոր չըզգաս, եթէ կերակրես ուրիշների,  
քան թէ ստիպես ուրիշներին, որ կերակրեն քեզ»:

37. ԱՐԴԱՐԱՍԷՐԻ ՄՈՂԸ

Ծովափնեայ քաղաքում ապրում էր մի դա-  
տաւոր. նա երկար ժամանակ պաշտօնի մէջ էր  
և անչափ կալուածներ ունէր: Ժողովուրդը նրան  
փառաբանում էր աւելի արդարասիրութեան հա-  
մար քան թէ հարստութեան, չքաւոր մարգիկ  
նրան ուղղակի հայր էին կանչում: Երբ մահի  
օրն եկաւ, դատաւորը հրամայեց կանչել իրա  
մօտ բարեկամներին, ազգականներին և ասեց.  
«հա ես մեռնում եմ, մահուան հրեշտակը երևաց  
ինձ այս գիշեր, լսեցի նրա թևերի հովհորցը:  
«Խնդացէք և ուրախացէք ինձ հետ»»: Երջպատուո-  
ւները զարմացան, իրար երես նայելով ասին.  
«այսօր առաջին անգամն է, որ դատաւորը սուտ  
բան է ասում»: Իսկ նա ժպտալով ասեց. «Իմ  
սիրելիք, միք տխրիլ և զուր յոյս միք ունենայ,  
օրերիս վերջն է: Արդէն երրորդ անգամն է, մօ-  
տից տեսնում եմ մահուան հրեշտակին. նրա  
դէմքն արդէն ինձ ծանօթ է: Բայց այսօր առա-  
ջին անգամն էր, որ երևաց պայծառ երեսով:  
Այդ պատճառով ես սիրով ու հաճութեամբ գնում  
եմ նրա հտնից»:

Բարեկամները լռելեայն նայեցին դատաւո-  
րին ու նրա ասածը չը հասկացան: Նրանց տա-  
րակուսանքը փարատելու համար շարունակեց  
խօսքը. «դուք ինձ կըհասկանաք, երբ պատմեմ  
ձեզ իմ կեանքի գլխաւոր անցքերը: Երիտասար-

դութիւնս անցել է ուրախ և խաղաղ: Երբ չա-  
փահաս եղայ, ինձ դատաւոր նշանակեցին այս  
քաղաքում: Ամեն մի կտրած վճիռս ընդունում  
էր լի ու լի վստահութեամբ: Բացի այդ, ինձ  
սիրում էր մի կին, որ ամենի կարծիքով մեր  
աշխարհի ամենագեղեցիկ ու ընտիր ծաղիկն էր.  
Ինձ անուանում էին՝ ամենաբաղդաւոր մահկա-  
նացու: Այդ ժամանակ ես ծանր հիւանդացայ,  
երկար ամիսներ պարկած մնացի. ոչ ոք չէր կա-  
րում ինձ օգնել: Բժիշկներն ասում էին՝ սա կը-  
մեռնի: Այդ միջոցին առաջին անգամ աչքիս ե-  
րևաց մահուան հրեշտակը. ես աղաչեցի նրան,  
որ ինձ խնայի: Նա տուեց կողքովս անցաւ, ես  
առողջացայ և կեանքն ինձ համար աւելի քաղց-  
րացաւ քան թէ առաջ էր: Կինս բերեց երկու  
զաւակ, այնպէս գեղեցիկ էին ինչպէս երկու ծաղ-  
կափթիթ նուննի: Ամենն էլ ասում էին ինձ հա-  
մար. «բաղդ. բաղդ, սրտմն է, ոչ ընտանեկան  
կեանքի կողմից պակաս տեղ ունի և ոչ հասա-  
րակական»: Բայց հա ծովի միւս երեսից լոյս  
ընկաւ ժանդախտը, նրան զոհ գնացին երեխա-  
ներս՝ տղայ ու աղջիկ. նրանցից ետ անկողին  
ընկաւ մայրը, որ միշտ կրկնում էր, «անխ, զա-  
ւակներիս տարան, ես էլ ուզում եմ նրանց մօտ  
գնալ»: Նա էլ վախճանուեց: Մնացի մենակ իմ  
ընկարձակ ապարանքի մէջ: Դառնացած սկսեցի  
կանչել մահուան հրեշտակին, իմ գերզաստանի  
կործանիչին: Երբ նա չէր գալիս, ես ասում էի,  
«ծովի յատակում լինես, կը գտնեմ քեզ, անողոր-  
միդ և կը հարկադրեմ, որ տանես ինձ իմ սիրե-

լի ննջեցեալների մօտ: Էլ ինչիս է պէտք կեանքը երկրիս վրայ:

Այդպէս մի անգամ թափառում էի գիշերով ծովի ափին: Յանկարծ խուղից ականջս ընկաւ լացի, ախ ու վիշի ձայներ: Գնացի ներս կարծելով թէ այնտեղ վշտի ընկերներ կը գտնեմ: Յատակին փռուած էր մի կինարմատ, և մագերը պոկոտում էր. հինգ մանուկներ շրջապատած նրան լալիս էին և հաց ուղում: Խուղի մէջ կանգնած էր վիզը ճուկ ձերունի, որ ամբողջ մարմնով դողդողում էր: Ես սարսափեցի ու հարցրի. «այ կին, ի՞նչ է պատահել քեզ»: Նրա տեղ ձերունին պատասխանեց. «վերջին փոթորկի միջոցին ծովը կուլ տուեց նրա ամուսնուն, որ իմ որդին էր: Նրա հետ խորտակուեց և նաւը: Հարուստ մարդը, որ տուել էր նաւը սարքելու գումարը, յետ պահանջեց իրա փողերը: Բան չունէինք որ վճարենք, նա եկաւ այստեղ եղած չեղածը սրբեց տարաւ, էգուց էլ մեզ վռնդելու են այս խուղից, եթէ սովից մեռած չը լինենք»: — «Ինչո՞ւ չէք դիմել Հազա քաղաքի դատաւորին, ասի ես: — «Դատաւորն ապրում է ապարանքի մէջ, խօսեց երեխանց մայրը, մեր ցաւով նա ի՞նչ կը հետաքրքրուի, քանի որ աշխարհի մէջ ամենաանբախտիկ մարդն է»: Ծերուսին միւս կողմից վրայ բերեց. «պարտքն օրէնքով հաստատ էր, դատաւորն էլ հրամայեց, որ վճարենք»: — «Ա՛յ, Հազայի դատաւոր, գոչեցի ես, ա՛յս է քո արդարասիրութիւնը»: Գիշերը մնացի նրանց ձկնորսական խուղում, մխիթարեցի, որքան կարող էի ու

լոյսը բացուելիս ասի. «ես Հազայի դատաւորն եմ. գնանք իմ տուն, որ արդար վճիռ անեմ»: Հէնց այդ օրից լոյսը ճառագայթեց հոգուս մէջ: Աստուած ցոյց տուեց ինձ իմ ոչնչութիւնը, տեսայ, որ ես աւելի մեծ պարտապան եմ, քան թէ նրանք, որոնց օթեան տուի իմ տանը: Ես որոնում էի Աստծուն և գտայ նրան: Ինչ որ անում էի խեղճերին ու կարօտեալներին, այդ ես չէի անում, այլ Աստուած, որ նստած էր իմ մէջ: Այսպէս իմ կեանքը երեք անգամ փոփոխութիւն կրեց և ամեն անգամ ինձ ուրիշ տեսակ երևաց մահը: Վայելչութեան օրերին երևում էր իբրև կործանիչ հրեշտակ, քամբաղդութեան օրերին իբրև զինուոր, որ դատապարտեալին մահուան բաժակ է մատուցանում, իսկ այժմ նրա մէջ տեսնում եմ խաղաղ առաքեալին, որ տանելու է ինձ իմ սիրելի ննջեցեալների մօտ»: Այս խօսքերից ես ձերուսին գլուխը թեքեց բարձին և ընկաւ յաւիտենականութեան գիրկը:

38. ԱՅՐՈՒ ԴԱՏԸ

Բաղդատի կողմը կար մի դատաւոր՝ Բէն Բաղիր անունով, դա ճամբին հանդիպեց մի այրու, որ մի էշ առաջին տանում էր ու անմխիթար լալիս: — «Ինչո՞ւ ես լալիս, ա՛յ թշուառ կին, հարցրեց դատաւորը: — «Իսկապէս թշուառ կին եմ, պատասխանեց այրին, այս էշը, դատարկ տոպրակը և վրայիս մաշուած շորն է իմ բոլոր կարողութիւնը, մնացածը խլեց ինձնից մեք վեհափառ խալիֆան: — «Իսկ քո միւս կարողու-

Թիւնդ ի՞նչ բան էր:—«Ես ունէի մի գետնա-  
խրչախի, որ ժառանգուեցիւն էր մնացած իմ և հան-  
գուցեալ մարդուս ծնողներէից: Այդ գետնատունն  
առանձնապէս սիրելի էր ինձ և մարդուս. այնտեղ  
էինք ծնուել ու մեծացել, այնտեղ էինք սիրել  
մէկ մէկու: Մենք ամուսնացանք, խաղաղ ապրե-  
ցինք այնտեղ, անխոնջ աշխատելով ու փոխա-  
դարձ սէր վայելելով: Վերջին շնչում մարդս խնդ-  
րեց ինձ հող տանել, որ մեր ծնողներէից մնա-  
ցած փոքր կալուածը ժառանգէր մեր որդին. ոչ  
մի կերպով օտարի ձեռ չընկնէր: Մեր որդին  
ծառայում է խալիֆայի զօրքի մէջ. գուցէ հէնց  
այս րոպէին արիւն է թափում իրա խալիֆի հա-  
մար, որ կողոպտել է նրա խեղճ մօրը»:— «Բայց  
խալիֆան ինչո՞ւ խլեց քո կալուածը, հարցրեց  
դատաւորը:—«Նա կամենում էր այնտեղ իրա  
համար պալատ շինել, պատասխանեց այրին:—  
«Տէր ողորմած Աստուած, հառաչեց ինքն իրան  
դատաւորը, նրա ամբոցներն ու պալատները  
այնքան շատ են, որ թիւ չունին, միայն բա-  
հաճոյքի համար, նոր պալատ կառուցանելու պատ-  
ճառով արտաքսում է թշուառ կնոջն իրա կա-  
լուածից»:— «Իսկ ի՞նչքան փող վճարեց քեզ թա-  
գաւորը գետնատան փոխարէն, հարցրեց Բէն  
Բաղիրը:—«Վճարե՛լ, ի՞նչ էք ասում, նա ինձ ո-  
չինչ էլ չը վճարեց, պատասխանեց այրին: Հս-  
կրգբում թագաւորը չնչին գումար էր առաջար-  
կում, երբ ես բաց էի բաց հրաժարուեցի սրտիս  
համար թանկագին գետինը վաճառել, այն ժա-  
մանակ նա ուժով խլեց իմ ձեռից»:— «Բայց դու

նրան պատմեցիր քո թշուառ վիճակի մասին»:—  
«Ինչպէս չէ, չորեցի առաջը, արտասուքով ոտ-  
ներն ողողեցի, աղատ-պաղատ արի, անկեղծօրէն  
պատմեցի նրան այն բոլորը, որ կարող էր օգ-  
նել իմ վշտին ու յուսահատութեան»: Խեղճ կինը  
լռեց անկարող լինելով հեծկտոցը շարունակել:—  
«Ուրեմն քո աղաչանքները ո՞ւժ չունեցան նրա  
գուլթը շարժելու, խօսեց Բէն Բաղիրը կարեկցու-  
թեամբ:—«Ընդհակառակ, նա գուլթը սրտից հա-  
նած հրեց ինձ բազկով»: Այրու այս խօսքերի  
վրայ դատաւորը դէպ երկինք նայեց ու հառա-  
չելով խօսեց. «ճիւ երկնային թագաւոր, տես,  
մեր խալիֆան, որ երկրի վրայ քո տեղն է բռն-  
ում, իրաւունք է համարում իրա առջևից վը-  
ռընդել արգարութիւն պահանջողներին, իսկ դու  
երկայնամիտ ու ողորմած ես վերաբերում դէպի  
մարդկանց ամենամանրաւ գործողութիւնները»: Յետոյ  
դառնալով այրուն ասեց. «այ կին, կարճ  
ժամանակով բան տուր ինձ քո էջը և քո տոպ-  
րակը և ինձնից քիչ հեռու անի ետնիցս: Իմ  
խօսքը թագաւորի մօտ մի քիչ ուժ ունի... հիմի  
մտեղ է նա»:—«Նա այնտեղ է, այն հողի վրայ,  
որ քիչ առաջ իմն էի համարում, պատասխանեց  
այրին: Բայց ինչի՞դ է պէտք իմ էջն ու տոպրա-  
կը»:—«Ի՞նչ անհող կաց, առանց վախենալու ա-  
րի ետնիցս, պատասխանեց դատաւորն ու էջը  
առաջը գցած գնաց այրու գետնատան կուշտը,  
ուր կանգնած էր խալիֆան: Շատ սիրալիր ըն-  
դունեց դատաւորին և խօսեց. «վաղուց է քեզ  
չեմ տեսել, Բէն Բաղիր, այս ի՞նչպէս եղաւ, որ

մենք այստեղ հանդիպեցինք»։— «Ուղղափառների պետ, պատասխանեց դատաւորը, հէնց այս բո- պէին խօսում էի մի կնոջ հետ. նա...»։ Սալիֆան դէմքը խոժոռելով նրա խօսքը կտրեց. «գուշակում եմ թէ ի՞նչ պիտի խօսես. այդ մասին ոչինչ չեմ ուզում լսել։ Այն կինը պիտի պատիժ կրի իրա յամառութեան համար։ Չէ՞ որ ես իրաւունք ունեմ հպատակներին կեանքի ու ստացուածքի վրայ»։— «Քո իշխանութիւնը երկրիս վրայ անսահման է, պատասխանեց դատաւորը, խեղճ կինը յետ չի պահանջում իրա կալուածք. նա միայն ազաչում է, որ իրաւունք տաս մի բան վերցնելու ի յիշատակ իրա գետնատան։ Եթէ թոյլ կը տաս, ես նրա ցանկութիւնը կը կատարեմ, նրա տոպրակը կը լցնեմ իրա հայրական հողով»։— «Այդ բանը, ինչո՞ւ չէ, թոյլ կը տամ, ասեց խալիֆան ծիծաղելով, մէկի տեղ թէկուզ տաս տոպրակ վերցնի։ Բէն Բաղիր, քիչ միջոցից ետ դու այստեղը չես ճանաչիլ. այստեղ կանգնո՞ծ կը լինի աննման պալատ, ահա այստեղ շատրուանը բանելով օդը կը կենդանացնի, յետոյ դէպի երկինք կը բարձրանայ հոյակապ աշտարակ, որի կատարից կարելի է դիտել հեռու շրջակաները»։— «Այ թէ ինչ մտադրութիւններ ունես, խօսեց Բին Բաղերը, հողը տոպրակի մէջ ածելով։ Այս բոպէին վերջացնում եմ ձեռիս բանը, միայն իրաւունք տուր քեզ մի բան էլ խնդրեմ։ Արի օգնիր, այս տոպրակը էշի մէջքին գցենք»։— «Սեղքդ կորցրել ես, ի՞նչ է, գողաց խալիֆան, այդ ծանր տոպրակը ինչպէս կարող

եմ վերցնել»։— «Մի՞թէ ծանր է, ասեց Բէն Բաղիրը, հողով լիք տոպրակը քեզ համար ծանր է։ Եթէ ասածդ ճիշտ է, թագաւոր, ուրեմն ինչո՞ւ չես մտածում այն օրուայ վրայ, երբ ներկայանալու ես մեր ամենիս դատաւորին շալակիդ ունենալով թէ այս տոպրակը և թէ այս գետինը իրա վրայ կառուցուելիք բոլոր պալատներով, աշտարակներով, և թէ այն բոլոր խեղճ ու թշուառների արցունքները, որոնցով ողողուած է այս գետինը։ Այսօր դու անսահման իշխանաւոր ես, ձեռի մի շարժումով կարող ես կարճացնել մարդու կեանքը, բայց կը գայ այն ժամը, երբ դուքո հպատակների հետ հաւասար կանգնած կը լինես Աստծու առաջ»։

Սալիֆան ոչինչ չը պատասխանեց դատաւորին, իսկոյն հրամայեց, որ այրուեն վերադարձնեն նրա հայրական տունը, բացի այդ՝ իրա գետնից էլ մի մեծ կտոր աւելացնեն նրա բաժնի վրայ։



Յ Ա Ն Կ

- |                         |                          |
|-------------------------|--------------------------|
| Նուէր.                  | 20. Թագաւորն ու պանդո-   |
| 1. Հօր պատկերը.         | կատէրը.                  |
| 2. Նոր Սողոմոն.         | 21. Սրբազանն ու աւա-     |
| 3. Առանց քրտընքի փողը   | զակը.                    |
| համ չունի.              | 22. Թագաւորն ու փայ-     |
| 4. Եղիա մարգարէ.        | տահատը.                  |
| 5. Թագաւորի եղբայրներ.  | 23. Թագաւոր և բազէ.      |
| 6. Սրամիա գիւղացի.      | 24. Սաղըղի արդար վճիռը.  |
| 7. Թագաւորն ու իրա      | 25. Բորիկն ու մեծատունը. |
| հարեանը.                | 26. Թագաւոր և խրճիթ.     |
| 8. Թագաւորը և ծառան.    | 27. Ամենապատուական       |
| 9. Ո՞ւմ կարգադրածն է    | մարդը.                   |
| աւելի ճիշտ.             | 28. Ջրի հոսանքը.         |
| 10. Խելօք հովիւ.        | 29. Էշ և հարսանիք.       |
| 11. Ափրիկ. թագաւորի     | 30. Մեծատուն և անցորդ.   |
| դատաստանը.              | 31. Թագաւորաց թագաւոր.   |
| 12. Արարի ձին.          | 32. Երկու բարեկամ.       |
| 13. Անձնուէր աղջիկ.     | 33. Հարուստ ու անբաղդ.   |
| 14. Իսկական անկեանքներ. | 34. Ընտանեկան խաղա-      |
| 15. Հագար ոսկի.         | դութեան համար.           |
| 16. Մարգիկ ու աշխարհ.   | 35. Ուսուցիչ և աշակերտ.  |
| 17. Կովարածի աթոռը.     | 36. Նախախնամութեան ա-    |
| 18. Հնարագէտ ուղևոր.    | պաւինելը.                |
| 19. Թագաւորն ու գաւա-   | 37. Արդարասէրի մահը.     |
| ռապետը.                 | 38. Այրու դատը.          |

Մեր աշխատութեամբ պատրաստ են տպագրու-  
թեան համար

1. Ծերերի գրոյցներից. Բ. կապուկ.
2. Աշակերտի յիշատակարանը. Էդմ. Ամիչիսի, պատ-  
կերազարդ, թարգմ. գերմ.:
3. Քսան ընտրովի հեքիաթ. Գրիմից. պատկերազարդ  
թարգմ. գերմ.
4. Էմ. Կանտի կենսագրութիւնը. քաղուած գերման. աղ-  
բիւրներէց.
5. Թեոդոր Փեխներն իբրև մաածոյ և բարոյախօս.
6. Ի՞նչ է կրօնը. ուսումնասիրութիւն.

Կրօնի դասագրքեր

7. Մարգարեներ եւ հրէից վիճակը մինչեւ Հերովդես.  
չորրորդ տարի.
8. Քրիստոսի կեանքը մինչեւ Համբարձում. հինգերորդ  
տարի.
9. Առաքեալների ժամանակաշրջան եւ Հայաստանի Լու-  
սաւորիչներ. վեցերորդ տարի.

« Ազգային գրադարան



NL0167898

Թիֆլիսի գրախանութներում վաճառուում են մեր  
աշխատութիւնները:

1. ԾՈՎԻՆԱՐ. գ. տպ.	. . . . .	25 կ.
2. Շէն ԹԱԳԱԻՈՐԻ ԱՂԶԻԿ. բ. տպ.	. . . . .	25 »
3. ԵՐԿՈՒ ԱՂԲԵՐԱՅԵՂ. բ. տպ.	. . . . .	30 »
4. ԱՍՏՈՒԱԾ ԱՂՔԱՏԻ ԿԵՐՊՈՒՄ.	. . . . .	20 »
5. Հէֆիաթներ	. . . . .	30 »
6. ԵՐԿՈՒ ԶՐՈՅՅ	} ա. Երեք խոստովանութիւն } } պատկերով } բ. Երեք ոսկու պատմութ. }	25 »
7. ԱՆՄԵՌ ԱՇԽԱՐՀ.		
8. ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ.	. . . . .	25 »
9. ԾԵՐԵՐԻ ԶՐՈՅՅՆԵՐԻՑ. պատկերով	. . . . .	20 »
10. ՍՐՏԱՇԱՀ ԲԱՆԵՐ	. . . . .	20 »
11. ԱՍՏՈՒ ԴԱՏԱՍՏԱՆ.	. . . . .	5 »
12. ԱՍՏՈՒԱԾ ԶԸ ՃԱՆԱԶՈՂ.	. . . . .	10 »
13. ԳԱՂՕ ԱՓՕ. բ. տպ.	. . . . .	12 »
14. ԺԱՄԱՆԱԿԸ ՈՍԿԻ. պատկերներով	. . . . .	40 »
15. «ՍԻՐՏ» գրքից պատկերներով	. . . . .	40 »
16. ՔԱԶ ԱՂԱՍԻ, ՍԻՐԵԼԻ ՀԵՐՈՍ.	. . . . .	25 »
17. ՍԱՍՈՒՆՅԻ ՅՈՎՆԱՆ.	. . . . .	30 »
18. ԽՈՒԼ ԽԱԶԻԿ. բ. տպ.	. . . . .	25 »
19. ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	. . . . .	50 »
20. ՓՈՔՐՈԳԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ.	. . . . .	15 »
21. ՎԱՐԴԱՆ. ՂԵՒՈՆԴ. ՄԱՍԻՆ. պատկերներով	. . . . .	30 »

Կրօնի դասագրքեր

22. ԿՐՕՆԻ ԴԱՍԱՏԻՈՒԹԻՒՆ. ա, բաժ. ձեռնարկ ուսուցիչների համար	. . . . .	40 »
23. ԿՐՕՆ. ա. տարի. աշակ. դասագիրք	. . . . .	15 »
24. ԿՐՕՆ. բ. տարի. աշակ. դասագիրք	. . . . .	20 »
25. ԿՐՕՆ. գ. տարի. աշակ. դասագիրք	. . . . .	35 »

Հեղինակի հասցէն՝ Թիֆլիս. Միքայէլեան  
փողոց № 81. բնակ. 9.